ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ*

1915
ՀՈՒՆԻՍ

1 հունիսի

• Սեբաստիայի նահանգի Շապին-Կարահիսար քաղաքում սկսվում են ձերբակալությունները, որից հետո հայերը դիմում են ինքնապաշտպանության: Այն իր ավարտին հասավ միայն հունիսի 23-ին:

• Դիարբեքիր-Խարբերդ ճանապարհի վրա, Բալու քաղաքի մոտ կոտորվում են 1914թ. նոյեմբերից ճանապարհաշինարարության վրա աշխատող 12000 հայ զինվորներ:[2]

• Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի դեսպան Մորգենթաուն իր հունիսի 17-ի զեկուցագրում՝ բերված ըստ Բրայս/Թոյնբիի «Կապույտ գրքի», նշում է, որ Էրզրումի նահանգի Բաբերդ քաղաքի «...բռնի տեղահանությունը սկսվեց հունիսի 1-ին», իսկ դրանից «...մեկ շաբաթ առաջ շրջակա գյուղերը դատարկվեցին իրենց հայ բնակիչներից»:[3]

2 հունիսի

• Թուրքական բանակում տիրող վիճակի և, ընդհանրապես, նրա իրական պատկերի մասին է վկայում Կարինի գերմանացի հյուպատոսն իր տեղեկագրում. «Այստեղ զորավարժության համար հավաքված թուրքական գնդերի երրորդ մասը հիվանդացել է, մի հաջորդ երրորդ մասն էլ դեպի բանակ գալու ճանապարհին դասալքել էր»:[4]

• Երիտասարդ թուրքերի կուսակցության անունից Օսմանյան կայսրության ռազմական նախարար Էնվերը հրահանգում է՝ սկսել Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի բոլոր նահանգների հայերի տեղահանությունը դեպի Բաղդադի երկաթգծից այն կողմ գտնվող անապատները:[5]

• Սեբաստիա քաղաքի բոլոր այն հայերը, ովքեր զինվորական ծառայության փրկագինը կամ տուրքը վճարել էին, նաև բոլոր նրանք, ովքեր ընդունակ էին ղեկավարելու որևէ խմբավորում, հանկարծակի ձերբակալվում են:[6]

• Կարինից դեսպան Վանգենհայմին ուղարկած հեռա-

* Սկիզբը՝ հանդեսի նախորդ (10-11) համարում:

գրով հյուպատոս Շոյբներ-Ռիխտերը հայտնում է, որ հարթավայրերից հայերի աքսորի վերաբերյալ բանակի գլխավոր հրամանատարի հետ իր բանակցություններն անարդյունք եղան, և որ այս մեծածավալ աքսորը հավասարազոր է կոտորածի, քանի որ փոխադրամիջոցների պակասության պատճառով աքսորյալների հազիվ կեսը ոտքով կհասնի նշանակման վայրը: «Այն իր հետևից կբերի ոչ միայն հայ ժողովրդի, այլև ողջ երկրի քայքայում: Ռազմական բնույթի պատճառաբանություններն անհիմն են, որովհետև տեղի բնակչության ապստամբությունը բացառվում է, քանի որ արտաքսվողները միայն կանայք և երեխաներ են: Իսլամ ընդունող հայերին չեն աքսորում: Հայկական լքված գյուղերը, որ ես այցելեցի, թալանված են: Կողոպտված է նաև Ղզլը վանքը, իսկ եկեղեցին՝ ավերված»:[7]

• Գերմանիայի դեսպան Վանգենհայմը Կոստանդնուպոլսից հեռագրում է Բեռլին, արտաքին գործերի նախարարությանը. «Հայկական հարցի մասին դոկտոր Լեփսիուսի արտահայտությունները ստիպում են մտահոգվել, որ նրա այցն այս պահին այստեղ կարող է մեծ տհաճություններ պատճառել մեզ՝ հատկապես հայերի ծանր վիճակը նրա տեսնելուց հետո և վնասել մեր ավելի կարևոր շահերին: Նրա տեսակետն այն մասին, որ հնարավոր է ռուսահայերին իր կողմ գրավել՝ Թուրքիայի ձեռնարկած ստիպողական միջոցառումներից (զանգվածային տեղահանություն և պատիժ՝ հրաժարվելու դեպքում) համարում եմ երազանք, ինչպես և կասկածում եմ, որ նրան կհաջողվի հանգստացնել տեղի հայերին, քանի որ թուրքական կառավարությունը հաստատապես մտադիր է անպայման ի կատար ածել այդ միջոցառումները և վերջին ժամանակներս էլ ավելի է խստացրել դրանք: Ուստի ես դոկտոր Լեփսիուսին այս այցից հրաժարվելու մասին լրջորեն խորհուրդ տալը թողնում եմ Ձեզ»:[8]

• Վանի նախկին կուսակալ Զևդեթ բեյը, որն իր զորքերի մնացորդների հետ Բիթլիսում էր գտնվում, արշավում է Բիթլիսի գավառի Ախլաթ գյուղի վրա և կոտորում այնտեղ մնացած հայերին:

3 հունիսի

• Սկսվում է Հաճնի տեղահանությունը, որը տևում է մինչև սեպտեմբեր:[10]

• Թալեաթը Ջեմալ փաշայի հրամանատարներից մեկի՝ Ֆախրի փաշայի (Հալեպի կայազորի պետ) ենթակայության տակ է դնում ամենաանգութ ջարդարարներից մեկին՝ Էյուբ բեյին, որպեսզի չեզոքացնի Հալեպի նահանգապետ Ջելալ բեյի՝ հայերի հանդեպ հանդուրժողական քաղաքականությունը:[11]

• Հալեպի գերմանական հյուպատոս Ռյոսլերը հեռագրով հայտնում է դեսպան Վանգենհայմին. «Հրահանգ է ստացվել Ադանայի նահանգից այստեղ հասած հայերին բաժանել մահմեդական գյուղերի վրա: Նրանք այնտեղ կոչնչանան»... և խնդրում է միջնորդել, որ նրանց թույլատրվի մնալ Հալեպում:[12]

• Թուրք զինվորներն ու ժանդարմները շրջապատում են Մարդին քաղաքը և սկսում հայ անվանի մարդկանց ձերբակալությունը:[13]

• Պոլիսում ձերբակալվում են Ազգային (երեսփոխանական) ժողովի անդամներ Գրիգոր Զոհրապն ու Վարդգեսը:[14]

• Լիազոր-նախարար դոկտոր Կոլուշևը Բուլղարիայի նախարարների խորհրդի նախագահ դոկտոր Ռադոսլավովին Պոլսից գրում է. «Հայերի դեմ տեռորը շարունակվում է: Դիարբեքիրից ստացված տեղեկությունների

համաձայն, այնտեղ խանութներ են հրկիզվել, և ...հայ ու քուրդ բնակչությունը ապստամբել է թուրքական իշխանությունների դեմ»:[15]

4 հունիսի

• Թուրքական կառավարությունը Կոստանդնուպոլսի «Վոլֆ» հեռագրական գործակալության միջոցով պատասխանում է դաշնակից պետությունների՝ Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի մայիսի 24-ի համատեղ հայտարարությանը, նշելով, որ, իբր թուրքերն են ջարդվել հայերի ձեռքով, որոնց դաշնակից երկրները դրդել են դավաճանել պետությանը, որի արդար իրավունքն էր պաշտպանվել, և կառավարության ձեռնարկած միջոցառումները երբեք հայերի դեմ չեն ուղղվել, որ Կաբինի, Դերջանի, Սասունի, Բաղեշի և Կիլիկիայի հայերը բացարձակապես ոչինչ չեն արել, որով խանգարած լինեն հասարակական կարգն ու անդորրը, որպեսզի կառավարությունն անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեր: Իրականում, հենց այդ պատասխանի խմբագրման ժամանակ արդեն հրաման էր տրվել ընդհանուր տարագրության մասին:[16]

• Տրապիզոնի նահանգի Սամսոն քաղաքից գերմանական փոխհյուպատոս Կուկհոֆը դեսպան Վանգենհայմին հղած տեղեկագրում հայերի տեղահանության մասին գրում է, որ թուրքական կառավարության «...ձեռնարկած հակամիջոցները (ինչպես երևում է բոլոր անատոլիական նահանգների համար) այնքան դաժան են և այնքան են հակասում մարդկայնության զգացմունքներին, որ հնարավոր չէ դրանց անտարբեր վերաբերվել՝ խոսքը ոչ ավել, ոչ պակաս ողջ ժողովրդի բնաջնջման կամ բռնի մահմեդականացման մասին է, որի ներկայացուցիչներն անմիջականորեն մասնակցություն չեն ունեցել հեղափոխական շարժման մեջ, հետևաբար հանդիսանում են անմեղ զոհեր... Կառավարությունը մոլեռանդ, ուղղափառ մահմեդական կանանց և տղամարդկանց ուղարկում էր հայկական տներ՝ մահմեդականություն ընդունելու քարոզչության նպատակով, բնականաբար, ծանր հետևանքների սպառնալիքով նրանց համար, ովքեր հավատարիմ կմնային իրենց հավատին: Որքան ինձ հայտնի է, ներկայիս դրությամբ շատ ընտանիքներ այստեղ ընդունել են մահմեդականություն, և նրանց թիվը օրեցօր ավելանում է: Դժբախտներից շատերը մինչև այժմ դիմակայում էին կրոնափոխության գայթակղությանը և օրեցօր խմբերով տեղահանվում են երկրի խորքերը: Գրեթե ոչ մեկի մոտ ժամանակ չմնաց կարգավորելու գործերը: Վերցնելով միայն ամենաանհրաժեշտ իրերը, նրանք ստիպված էին թողնել իրենց տներն ու ունեցվածքը: Ինքնըստինքյան ենթադրվում է, որ հայ քրիստոնյաներից ոչ մեկը չի հասնի այդ նպատակակետին: Երկրի խորքերից եկած լուրերը խոսում են քաղաքների ամբողջ տեղահանված բնակչության անհետացման մասին...

Ես փորձում եմ բոլոր միջոցներով ներազդել նահանգապետի վրա այն առումով, որ կառավարության միջոցառումը հնարավոր լինի սահմանափակել 17-ից 60 տարեկան արական բնակչության ժամանակավոր արտաքսումով, որպեսզի այդ ձևով հնարավոր լինի բացահայտել իսկական մեղավորներին: Ես նաև նրա ուշադրությունը դարձրեցի այն անչափ անբարենպաստ տպավորության վրա, որը կառաջացնեն այդ միջոցները Գերմանիայի և Ավստրիայի քրիստոնյա բնակչության շրջանում: Ամեն ինչ ապարդյուն էր՝ ազգայնամոլների համար անհասանելի են բանականության հիմնավորումները: Եվ ինչպիսի՞ն էին հետևանքները: Անատոլիայում հայկական տարրի բնաջնջման հետևանքով խախտվում է ողջ առևտուրը և

անհնարին է դառնում երկար տարիներով երկրի տնտեսական զարգացումը, քանի որ բոլոր վաճառականները, ձեռնարկատերերը և արհեստագործները բացառապես հայեր էին: Այս կետը ես նույնպես բացատրեցի նահանգապետին, ցավոք՝ անարդյունք:

Այսօր կառավարողների երկաթյա սկզբունքն է՝ մահմեդականացնել ամբողջ Թուրքիան և դրա համար կիրառել բոլոր միջոցները: Նրանց մոտ բացակայում է ահավոր կորուստների չնչին հասկացողությունը, որոնք ունեցավ երկիրը, ինչպես նաև տեղական և արտասահմանյան գործարար աշխարհը հայկական տարրի բնաջնջման հետևանքով: Հավանաբար գերմանացի ներդրողները պետք է կանխատեսեին, թե ինչպիսի հետևանքներ կառաջացնեն Հայկական հարցի սարսափները, երբ դրանց մասին հայտնի դառնա: Ամբողջ քրիստոնյա աշխարհի բողոքի ձայնն անխուսափելի է... Մեր թշնամիները դրանից գերազանց կապիտալ կկորզեն, և մեր հայրենակիցներին, հավանաբար, նույնպես խորին բողոքի զգացում կհամակի:

Իսկ ամենավատն այն է, որ ամբողջ աշխարհը դրա մեղքը կբարդի Գերմանիայի վրա, քանի որ... Բարձր Դռան ղեկավարությունն ամբողջությամբ գտնվում է մեր ձեռքում և որ այդչափ կտրուկ միջոցը կարող էր իրականացվել միայն Գերմանիայի համաձայնությամբ:

Այնուամենայնիվ հուսով եմ, որ Ձերդ գերազանցության փորձված հմտության շնորհիվ կհաջողվի դադարեցնել երկրագնդի ամենահին և ամենաղժբախտ ժողովուրդներից մեկի մեծ մասի վերջնական ոչնչացումը...»:[17]

5 հունիսի

• Տեղահանություններ են սկսվում Վանի գավառի Շար գյուղում:[18]

• Խարբերդի նահանգի Մալաթիա քաղաքի մոտ, Չիֆթլիկ կոչվող վայրում Մուհամմեդ բեկի չեթեները գնդակահարում են ճանապարհների շինարարության վրա աշխատող 1500 հայերի, որից հետո, անցնելով Եփրատի մյուս ափ, կոտորում են 500 մալաթիացի ճանապարհաշինարարների ևս:[19]

• Հալեպի ամերիկյան հյուպատոս Ջեքսոնը դեսպան Մորգենթաուին տեղեկացնում է, որ Մարաշից, Զեյթունից, Հասանբեյլիից, Բաղեշից, Ադանայից, Դյորթ-Յոլից, Հաճընից և այլ տեղերից զինված պահակախմբերի ուղեկցությամբ հայ գաղթականների ստվար քարավաններ են անցնում, որոնք կազմված են 300-500 հոգանոց խմբերից՝ հիմնականում ծերեր, կանայք և երեխաներ: Միջին տարիքի բոլոր տղամարդիկ տարվել են զինծառայության: «Հայ գաղթականները զուրկ են կենսական տարրական պայմաններից, և, ինչպես զեկուցում են ճանապարհորդները, Բաղդադ հասած հազարավոր մարդկանց ցրում են անապատով մեկ, որպեսզի նրանք մեռնեն սովից ու հիվանդություններից՝ կիզիչ արևի տակ: Վստահելի մարդուց տեղեկացել եմ, որ այժմ Հալեպում կան ավելի քան 26000 այդպիսի մարդիկ և գիտեմ նաև, որ դրանից էլ շատ ավելի մարդկանց տարել են տարբեր ուղղություններով: Ավելի քան 25000 մարդ էլ այժմ գտնվում են իրենց թշնամի կրոնի մարդկանց իշխանության տակ, որոնք տանջում ու խոշտանգում են նրանց...»:[20]

6 հունիսի

• Սկսվում են տեղահանություններն Արաբկիրում: Առաջին քարավանը հազիվ Գյումուշմադեն հասած՝ մերկացնում են բոլորին, նստեցնում

նավ և Եփրատի ափից քիչ հեռու գնդակահարում: Իսկ նրանք, ովքեր մնացել էին գետեզրին՝ սվինահարվում և կացնահարվում են: Հետագայում բոլոր քարավանները կոտորվում են նույն ձևով, և հուլիսի վերջին Արաբկիրում այլևս հայ չի մնում:[21]

• Հալեպում Գերմանիայի հյուպատոս Ռյոսլերն իր տեղեկագրում Աղանայի նահանգից եկած հայ տարագիրների մասին գրում է. «Հայ աքսորյալների մեծամասնությունը կանայք են: Տեղափոխության ժամանակ նրանք անպաշտպան են և բռնաբարության ենթակա: Հնարավոր չէ՞ր, որ միայն տղամարդիկ ցրվեին, իսկ կանայք ու երեխաները մնային Հալեպում: Ցարդ արդեն բազմաթիվ երեխաներ են զոհվել գաղթի ճանապարհին...»:[22]

• «Ռուսների կողմից Վանի գրավումից հետո,- գրում է "The New York Times"-ը,- քրդական հրոսակների գազանությունները շարունակվում են Բիթլիսի, Մուշի, Դիարբեքիրի շրջաններում: Դիարբեքիրի բնակիչները Վանի օրինակով զինված ինքնապաշտպանության են դիմել»:[23]

7 հունիսի

• Սկսվում են տեղահանությունները Երզնկայում և Ակնում: Ընդ որում Երզնկայի հայերի առաջին քարավանը կազմված էր հարուստներից, որոնց թույլ էին տվել վաճառել ամեն ինչ և մինչև Խարբերդ գնալ կառքերով:[24]

• Զավեն պատրիարքը Բուլղարիայի հայոց առաջնորդ Ղևոնդ եպիսկոպոս Դուրյանին գրելով հայերի ջարդերի մասին, խնդրում է դիմել բոլոր անհրաժեշտ տեղեր՝ հայերի բնաջնջումը կանխելու համար:[25]

• Մերսինում ԱՄՆ-ի հյուպատոս Նաթանը տեղեկացնում է, որ Աղանայից տեղահանված ընտանիքների մեծ մասը կարողացել է ետ վերադառնալ, իսկ Զեյթունը հիմնականում հայաթափվել է: Տարսոնով անցնելիս անասելի ծանր պայմաններում գտնվող զեյթունցի գաղթականներին ուղեկցել և ինչ-որ չափով օժանդակել են ամերիկացի միսիոներները: Զեյթունցիների տներում վերաբնակեցվել են մոհաջիրները (Մակեդոնիայից թուրք վերաբնակները):[26]

8 հունիսի

• Երզնկայից սկսում են հեռանալ տարագրյալների խմբեր, որոնց քանակը հասնում էր 20-25 հազարի: Նրանց տանում էին Քեմախի կիրճ, որտեղ նրանց ամբողջովին կողոպտում էին, ապա դաժանորեն սպանում ու գցում գետը:[27]

• Ձերբակալվում են Ուրֆա քաղաքի անվանի անձինք և մտավորականները, որոնց երկու օրից իրենց ընտանիքներով աքսորում են:[28]

• Թալեաթը հրամայում է, որ հայերի լքված և լքվելիք գույքի տնօրինմանը տեղացի ժողովուրդը չպետք է մասնակցի:[29]

• Ջեմալը Սիսից Հալեպ տարագրված Սահակ կաթողիկոսին գրում է, թե տարագրության ընթացքում հայերին կտրվի օժանդակություն և ապահովության երաշխիք:[30]

• Մարդինից ամերիկյան բժիշկ Դ.Թոմը Հալեպի հյուպատոսին հեռագրում է, որ Դիարբեքիրից դր.Սմիթը հայտնել է իրեն. «Տիգրիսն ի վայր, Մոսուլի ուղղությամբ տանում են 500-1000 տղամարդկանց... Օրեցօր աճում են թալանն ու սպանությունները: Գետից արևելք գտնվող Ռեդվան գյուղում սպանել են անգամ փոքր երեխաներին... Ցիրուցան եղած հայերի թիվը հասնում է 62000-ի, որոնց 80%-ը կանայք ու 15 տարեկանից ցածր

երեխաներ են: Շատ կանայք ստիպված ծննդաբերում են ճանապարհին՝ երեխաներին թողնելով բախտի քմահաճույքին, որոնց հավաքում են Մոսուլի գերմանական առաքելության կանայք»:[31]

9 հունիսի

• Թուրքական կառավարության կողմից հատուկ ստեղծված տարագրությունների գործադիր հանձնախմբի մի որոշումով Կարնո լայնածավալ դաշտավայրի գյուղերի բնակչության տեղահանությունից հետո սկսվում է Էրզրումի նահանգի քաղաքների տարագրությունը:[32]

• Թալեաթը հրահանգում է հայերի դպրոցները՝ իրենց ողջ ունեցվածքով արժեվորելուց հետո հանձնել թուրք գաղթականներին:[33]

• Կոստանդնուպոլսի հայոց Զավեն պատրիարքը մի հուշագիր է ներկայացնում Թուրքիայի արդարադատության նախարար Փիրուզադե Իբրահիմին՝ ցույց տալով «...հայկական եկեղեցիների, եկեղեցականների ու ժողովրդի կրած տառապանքն ու կողոպուտը, տարագրությունն ու սպանությունները»: Սակայն նախարարը հուշագրին պատասխանելու փոխարեն լկտիաբար հայտարարում է. «Կառավարությունը հայ ժողովրդի դեմ վատ դիտավորություն չունի, միայն մի խումբ թշնամիների դեմ է խիստ միջոցառումներ կիրառում»:[34]

10 հունիսի

• Քեմախի կիրճում, որի մոտ տեղակայված էր թուրքական 4-րդ զորաբանակի շտաբը և 86-րդ հեծելազորային գունդը, կառավարության իմացությամբ ու ցանկությամբ տեղի է ունենում Մամախաթունից մինչև Երզնկա ընկած շրջանների հայության կոտորածը, որը շարունակվում է մինչև ամսի 14-ը: Բնաջնջվում է 20000-25000 մարդ՝ հիմնականում կանայք և երեխաներ: Կոտորածներին թուրք զինվորների հետ մասնակցում էին նաև քուրդ հրոսակախմբերը, որոնք, ինչպես գերմանացի գթության քույրերին է պատմել մի ականատես թուրք կին, լկում ու սպանում էին կանանց, իսկ երեխաներին՝ գետը նետում:[35]

• Տիգրանակերտի նահանգում ուժեղանում են հալածանքները բոլոր հայերի և քրիստոնյաների դեմ: Միաժամանակ սկսվում են տեղահանությունները Մարդինում և Սևերեկում:[36]

• Մարդին քաղաքից ու գավառից ձերբակալված եկեղեցականների ու մտավորականների 417 հոգուց կազմված քարավանից 200 հոգին կոտորվում են քաղաքից մի քանի ժամ հեռու գտնվող «Շեյթան Գույուս» և «Զարզաֆուն Գալաս» կոչված վայրերում:[37]

• Մոսուլից գերմանական հյուպատոս Հոլշտայնը դեսպան Վանգենհայմին հեռագրում է. «Դիարբեքիրից Մոսուլ աքսորված 614 հայեր՝ ծերեր, կանայք, երեխաներ, լաստանավերով բերելիս լրիվ մորթվել են: Լաստանավերն երեկ այստեղ հասան դատարկ: Մի քանի օր է գետով դիակներ ու մարդկային մարմնի մասեր են լողում: Հայ «վերաբնակների» փոխադրումները շարունակվում են, նրանց բոլորին նույն ճակատագիրն է սպասվում...»:[38]

• Ջեմալը Տիգրանակերտի կուսակալ Ռեշիդին հեռագրով հրահանգում է, որ նա այնպես ներկայացնի, որ իբր «...Եփրատով դեպի հարավ քշված դիակները հայ ապստամբների դիակներ են և թաղի դրանք»:[39]

• Թալեաթը հրահանգում է պետական մարմիններին հայերին տեղավորել իրարից 5 ժամ հեռավորության վրա, ինքնապաշտպանական հնա-

ռավորություններից զուրկ վայրերում և ստիպել նրանց, որ իրենց երեխաներին թուրքական դպրոցներ ուղարկեն, իսկ նրանց թողած և թողնելի գույքի հարցը կարգավորել միայն հատուկ ստեղծված հանձնախմբերի միջոցով, որոնք միաժամանակ պետք է զբաղվեին նաև թուրք գաղթականների հայերից դատարկված գյուղերում և քաղաքներում տեղավորելու գործով:[40]

11 հունիսի

• Էրզրումի նահանգի Խոտորջուր ավանի բնակչության տեղահանությանը զուգահեռ՝ Խնուսի շրջանի 27 գյուղերից հավաքած 1700 հայ ընտանիքներ քշվում են Բասկանի կամրջից այն կողմ, դեպի Չափանի լեռները և կամուրջից ոչ հեռու կոտորվում:[41]

• Երիզա քաղաքից ու գավառից տարագրված բոլոր հայերը, հիմնականում կանայք ու երեխաներ քրդերի ու թուրք զինվորների կողմից 4 ժամվա ընթացքում կոտորվում են: Ինչպես պատմել են թուրք զինվորները գերմանացի գթության քույրերին, թուրքական հեծյալ ջոկատները սպանել են նաև նախորդ 3 օրերին կատարված կոտորածներից դեռևս ողջ մնացածներին: Նրանք պատմել են նաև, որ արդեն հուսահատ կանայք իրենց ձեռքով իրենց երեխաներին գետն էին գցում:[42]

• Գերմանական մի տեղեկագիր վկայում է, որ Իզմիթի նահանգի Գուրդբելեն գյուղի 6-7 հազար հայերը տարագրվում են՝ ենթարկվելով «...դժոխային տանջանքների, իսկ Իզմիթի ու նրա գավառի Պարտիզակ, Օվաջեկ, Դեոնքեոլ, Արսլանբեկ գյուղերի հայերը դաժանորեն խոշտանգվեցին»: Իսկ Արաբկիրում հայերից 2000 հոգի սպանվել և մնացածները կրոնափոխ են արվել:[43]

• Մարդին քաղաքից ու նրա գավառից աքսորված մտավորականների ու եկեղեցականների 417 հոգուց բաղկացած թափորի երկրորդ մասը՝ թվով 204 հոգի, կոտորվում է Տիգրանակերտից ոչ շատ հեռու, մի խոր ձորում:[44]

• Կեսարիայում կեղծ մեղադրանքով սկսում են կախաղան բարձրացնել հայ վաճառականներին, բժիշկներին, փաստաբաններին ու հոգևորականներին:[45]

• Տրապիզոնում ձերբակալված 250 ականավոր հայերից 42 հոգու, որոնք հիմնականում դաշնակցական ու հնչակյան կուսակցության ղեկավարներ էին, տանում են Փլաթանա (Ակչեբար) կոչվող քաղաքը, լցնում առագաստանավերը, մեկ-մեկ սպանում և գցում ծովը:[46]

• Մուշում գերմանացի, ազգությամբ շվեդ գթության քույր Ալմա Յոհանսոնն իր հուշերում գրել է. «Նախորդ օրվա ուժեղ հրաձգությունից հետո, առավոտյան ամբողջ քաղաքը (Մուշը - *Ժ. Ն.*) զինված էր, իսկ հայերը դուրս չէին գալիս տներից.... քաղաքի շուրջը տեղակայված էին թնդանոթներ, 20000 զինվորներ էլ եկել էին եղածներին օգնելու»:[47]

• Դեսպան Մորգենթաուն Բրայս/Թոյնբիի «Կապույտ գրքի» հիման վրա գրած զեկուցագրում նշում է, որ ահավոր կոտորածներով ուղեկցվող բռնություններ են տեղի ունեցել Իզմիթի նահանգի Պարտիզակ (2000 ընտանիք), Օվաջըկ (600 ընտանիք), Դոնքեոլ (65 ընտանիք), Սաբանջա (1000 ընտանիք) և այլ բնակավայրերում, իսկ Արաբկիրում, երբ 2000 տղամարդիկ սպանվել են, հայ բնակչությունն ընդունել է իսլամ:[48]

12 հունիսի

• Կեսարիա քաղաքի շենքերի պատերին փակցվում են հայտարա-

րություններ, որոնք ծանուցում էին, որ հայերը՝ կաթոլիկ և բողոքական, պետք է Սիրիա գաղթեն:[49]

• Հալեպից գերմանական հյուպատոս Ռյոսլերը գրում է. «Սիսի կաթողիկոսը մինչև այժմ [Զեյթունից] տարագրված հայերի թիվը 30000 հոգուց ավելի է համարում: Բոլորովին դատարկվել են Զեյթունը և շրջակայքը, ինչպես նաև Ալաբաշը, Ալբիստանը, Դյորթ-Յոլը, Հասանբեյլին: Ջեբել-Բերկետ և Ալբիստան գավառակներից աքսորված է ամբողջ ժողովուրդը, նույնիսկ զինվորների ընտանիքները... Կանանց և երեխաներին բաժանում են մահմեդական գյուղերի վրա, որտեղ էլ անօգնական վիճակում պետք է ոչնչանան»:[50]

• Մուշում գերմանացի գթության քույր Ալմա Յոհանսոնն իր օրագրում գրում է. «Վաղ առավոտյան սկսվեց քաղաքի ռմբակոծությունը թնդանոթներից, այնուհետև՝ հայերի որսը: Մուշի թուրք բնակչությունը զինված և բաժանված էր զինվորների վրա: Նրանք լավ գիտեին քաղաքի բոլոր ծակուծուկները և քաղաքը բոլոր կողմերից հրդեհեցին»:[51]

• Երզնկայում գերմանական Կարմիր Խաչի բժշկի զեկուցագրում նշված է, որ հունիսի 12-ին աքսորվել է քաղաքի բնակչության մյուս՝ երկրորդ կեսը, մոտ 20000 հոգի. ամսի 10-ին աքսորել էին բնակչության առաջին կեսին՝ հիմնականում կանանց, երեխաներին և ծերերին, քանի որ տղամարդիկ զորակոչված էին հիմնականում որպես աշխատուժ:

Զեկուցագրում նշվում է նաև, որ երբ վերադարձել են ուղեկալի զինվորները, նրանք դեղագործ Գեհելսենին պատմել են, որ իրենք Քեմախի կիրճում մասնակցել են հայ կանանց ու երեխաների կոտորածին: Թուրքերեն լավ իմացող Գեհելսենին զինվորն ասել է, որ իր ներկայությամբ սպանվել են 3000 հոգի, որ զինվորներն ափսոսանքով էին կրակում գեղեցիկ կանանց ու աղջիկների վրա, և, որ շատ կանայք իրենց երեխաներին գետն էին նետում, իսկ մյուսներին խլում էին թուրքերը:

«Կառավարությունը ստիպված խոստովանում է, որ ջարդեր են տեղի ունեցել, բայց նա մեղքը բարդում է քրդերի վրա և նույնիսկ հայտարարում է, որ այնտեղ է ուղարկել զորքեր՝ հայերին պաշտպանելու համար,- գրված է զեկուցագրում,- բայց դրան հակասում են զինվորի ասածները»: Այսպիսի պայմաններում ցանկացած հայ կանցներ ռուսների կողմը՝ եզրակացնում է զեկուցագրի հեղինակը:[52]

13 հունիսի

• Սկսվում են տեղահանությունները Խարբերդի նահանգի Չմշկածագի գավառակում ու Կեսարիայի նահանգի Վերանշեհիր գավառում:[53]

• Տարագրվում են Յոզկաթի, Ինջե-Սուի, Թամարզեի, Ֆենենի և Կեսարիայի հայերը: Չնայած Կեսարիայի շենքերի պատերին փակցրված ազդագրերը ծանուցում էին, որ կաթոլիկները, բողոքականներն ու զինվորների ընտանիքները չեն տեղահանվելու, բայց 2-3 օրը մեկ նրանց 80-ից 180 հոգի կազմող խմբերով տեղահանում և կոտորում էին:[54]

• Անգորայի ոստիկանապետը քաղաքի ու գավառի 1000 ընտանիք հայերին ոչնչացնելուց հետո և հեռավոր շրջաններում ապրող 50000-ից ավելի հայերին կոտորելուց առաջ գնում է Պոլիս և Թալեաթից ստանում բանավոր համաձայնություն՝ Անգորայի կաթոլիկ հայերին կոտորելու համար, չնայած ինքը Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալավիչինիին խոստացել էր նրանց ձեռք չտալ:[55]

• Սիսի Սահակ կաթողիկոսը հանդիպում է Ջեմալ փաշայի հետ և

խնդրում, որ բավարար համարվեն իրականացված տեղահանությունները. այդ պահին հանդիպման սրահ է մտնում Ադանայի կուսակալ Ջելել բեյը և ջղագրգիռ տոնով հայտարարում, թե ինչ-որ կատարվում է պետության ծրագիրն է:[56]

• Էրզրումից Գերմանիայի հյուպատոս Շոյբներ-Ռիխտերը հաղորդում է իրենց դեսպան Հոհենլոհե-Լանգենբուրգին, որ Էրզրումից 500 հայեր Խարբերդի միջով տարվել են Ուրֆա: Ճանապարհին սպանվել են գրեթե բոլոր տղամարդիկ:[57]

• Դիարբեքիրից գերմանական հյուպատոս Հոլշտայնը հայտնում է Կոստանդնուպոլսի իրենց դեսպանատանը, որ իրենց մոտ «...օրեցօր ավելի շատ է հայտնի դառնում Դիարբեքիրում տեղի ունեցած հայկական կոտորածի մասին, որը և այստեղի իշխանության անհասկանալի անբարեխղճության և թուլության հետևանքով կարող է հեշտությամբ անկանխատեսելի հետևանքներ ունենալ...»: Հյուպատոսը գտնում է, որ կառավարությունը պետք է փոխի քրիստոնյաներին հետապնդելու իր ծրագիրն ու դադարեցնի հայկական ջարդերը:[58]

14 հունիսի

• Ադանա քաղաքից, ինչպես նաև Ադանայի նահանգի Մերսին և Տարսոն քաղաքներից տարագրվում են շուրջ 32000 հայեր՝ չնայած նրանց չտեղահանելու համար Բ. Դռանը խնդրել էր ԱՄՆ-ի դեսպանը: Իսկ մինչ այդ արդեն տեղահանվել էին 30000 հայեր:[57]

• Էրզրումի նահանգի Բաբերդ քաղաքից ու նրա շրջակա գյուղերից, որտեղ ապրում էին 17000 հայեր, բնակչությունը տեղահանվում է 400-500 հոգիանոց քարավաններով, որոնց ճանապարհին թալանում էին ու կոտորում:[60]

• Սկսվում են տեղահանություններ Կարին քաղաքում:[61]

• Փարիզում ռուսական դեսպան Իզվոլսկու՝ արտաքին գործերի նախարար Սազոնովին ուղղված հեռագրում նշվում է, որ Փարիզում գտնվող դոկտոր Զավրիևը և Նուբար փաշան իրեն տեղյակ են պահում ֆրանսիական պաշտոնատար անձանց, քաղաքական գործիչների հետ հանդիպումների մասին՝ նպատակ ունենալով համոզել նրանց ընդունելու հայերի ցանկությունը՝ ինքնավար Հայաստանի ստեղծում, Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի հովանավորությամբ, դրան գումարած Կիլիկիան՝ Ադանա և Մերսին քաղաքներով, բացառությամբ Ֆրանսիային անցնող Ալեքսանդրետ նավահանգստի:[62]

• Էրզրումի հայ կաթոլիկական առաջնորդ Յոզեֆ Մելիքսեդեկյանի Կարինում գերմանական հյուպատոս Ռիխտերին ուղղված դիմումում նշվում է, որ հեռու չէ այն պահը, երբ «...քաղաքի 20000 անմեղ բնակիչները (չհաշված ավելի քան 30000 գյուղացիներին), բոլորովին անտեղյակ կգնան դեպի մահ... Այս տեղահանությունը մինչև Ուրֆա կտևի երեք ամիս: Ինչպե՞ս է խեղճ ժողովուրդն անցնելու եռամսյա այդ ճանապարհն անձրևի ու արևի տակ՝ առանց սննդի, փողի և անհրաժեշտ միջոցների: Ես հանդգնել եմ դիմել Ձեր բարությանը ժողովրդի անունից, որը հուսահատության մեջ է, խնդրելով այն օգնությունը, որը Դուք կարող եք ցուցաբերել այդ խեղճ քրիստոնյաների նկատմամբ»:[63]

• Հալեպի նահանգի Ուրֆա քաղաքից ամերիկացի միսիոներ պատվ. Ֆ. Հ. Լեսլին Հալեպի իրենց հյուպատոս Ջեքսոնին ուղարկած հաղորդագրության մեջ նշում է, որ Ուրֆայում «...ամեն օր ոստիկանները զենք են

փնտրում հայերի տներում և ոչինչ չգտնելով՝ տանում են ամենալավ ու հարգարժան հայ տղամարդկանց և ձերբակալում, նրանց մի մասին արտաքսում են, մյուսներին՝ խոշտանգում թեժացած երկաթներով, որպեսզի ստիպեն նրանց հայտնել ենթադրաբար թաքցրած զենքի տեղը... Այժմ քաղաքի լավագույն քաղաքացիներից մի հարյուր հոգի պահվում են բանտում, ոստիկանապետը կանչել է հայոց եպիսկոպոսին և ասել, որ եթե հայերն իրենց զենքն ու հեղափոխականներին չհանձնեն, ինքն, ըստ հրամանի, կարտաքսի Ուրֆայի ողջ հայ բնակչությանը, ճիշտ այնպես, ինչպես իրենք վարվեցին Զեյթունի ժողովրդի հետ: Մենք լավ գիտենք, թե ինչպես են վարվել նրանց հետ, քանի որ նրանցից հարյուրավորներին են քարշ տվել Ուրֆայի միջով, երբ նրանց տանում էին անապատները, դեպի ուր արտաքսում էին նրանց: Այս խեղճ աքսորյալները մեծ մասամբ կանայք, երեխաներ ու ծերունիներ էին, նրանց փայտերով էին խփում, ծեծում և մտրակահարում այնպես, կարծես նրանք լինեին վայրի կենդանիներ, կանանց ու աղջիկներին ամեն օր անարգում են նրանց ուղեկցողները...

Ուրֆայով անցել են մոտավորապես երկու հազար գաղթականներ, բոլորն ավելի շատ մեռած, քան թե ողջ, հարյուրավորները մեռել են սովահարությունից, դաժան վերաբերմունքից, գրեթե բոլորը մեռնում են սովից, ծարավից, նրանցից երեխաներ են գողանում Անազայի արաբները անապատում, որտեղով տանում են նրանց...

Ուրֆան հեղափոխական կենտրոն չէ և երբեք չի էլ եղել: Այստեղի բնակիչները միշտ էլ նվիրված են եղել կառավարությանը և երբեք չեն ընդդիմացել, նույնիսկ այն ժամանակ, երբ նրանց մորթել են ոչխարի նման: Շատ տարօրինակ է, թե ինչու՞ է տեղական ղեկավարությունը համառորեն հետապնդում այն ժողովրդին, որը միշտ էլ հանդես է բերել նվիրվածություն...»:[64]

15 հունիսի

• Թալեաթ փաշայի կյանքի դեմ դավադրություն կազմակերպելու ամբաստանությամբ Պոլսի Սուլթան Բայազիդ հրապարակում հնչակյան 21 գործիչներ կախաղան են հանվում: 12-ական հայեր էլ նույն օրը կախվեցին Կիլիկիայի տարբեր շրջաններում և Կեսարիայում:[65]

• Անգորայի նահանգի Կեսարիա գավառի հայությանը ընդհանուր տեղահանության հրաման է տրվում և 7 քարավաններով 30000 հայեր աքսորվում են իրենց բնակավայրերից:[66]

• Կ. Պոլսի «մի բարձրաստիճան ղեկավարի, որի խոսքերը կասկածի տեղիք չեն տալիս» 1915թ. հունիսի 15-ին գրած նամակում, որը տպագրվել է Նյու-Յորքի "Churchman" թերթի հոկտեմբերի 2-ի համարում, նշվում է. «...Այժմ 1500000 հայեր գաղթականի ցուպը ձեռքերին քայլում են դեպի Միջագետքի անապատները: Քչերն են տեղ հասնում, որտեղ նրանց սպասվում է տանջալից սովամահությունը: Օգտվելով, որ Եվրոպական երկրները զբաղված են պատերազմով, իսկ Գերմանիան ու Ավստրիան լուռ համաձայնություն են տվել, թուրքական կառավարությունն իրագործում է հայկական շրջաններից հայերին հանելու իր ծրագիրը... Մենք մի ամբողջ ազգի ոչնչացման փաստի առաջ ենք կանգնած»:[67]

16 հունիսի

• Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սազոնովը Փարիզի իրենց դեսպան Իզվոլսկուն հեռագրում է. «...Եթե հայ պատվիրակներին

հաջողվի Փարիզում կաբինետին թեքել ապագա հայկական մարզի կազմում Կիլիկիայի միացմանը, ապա կայսերական կառավարությունը կարող է միայն ողջունել թուրքահայերի ցանկությունների իրականացումը, որին նա հովանավորել է ի սկզբանե»:[68]

• Էրզրումից տեղահանվում է անվանի հայերի առաջին խումբը՝ շուրջ 500 հոգի, որոնց լեռների միջով Խարբերդից տանում են դեպի Ուրֆա: Նրանց բոլորին էլ, ինչպես նշում է Էրզրումի գերմանացի հյուպատոս Շոյբները, կոտորում են ճանապարհին:[69]

17 հունիսի

• Թուրքական «Վոլֆ» հեռագրական գործակալությունը հրատարակում է թուրքական երկրորդ զեկույցը, որը Պոլսի շրջանի զինվորական հրամանատարության մի հայտարարությունն էր Պոլսում կախաղան հանված 20 հնչակյանների մասին:[70]

• Թուրքիայում Գերմանիայի դեսպան Վանգենհայմն հաղորդում է Բեռլին, ոայխսկանցլեր Բեթման-Հոլվեգին. «Հայ բնակչության տեղահանությունն Արևելյան Անատոլիայի իրենց բնակավայրերից և ուրիշ շրջաններում նրանց բնակեցումը իրականացվում է անխղճորեն... Նրանց ստիպում են թողնել իրենց տները կամ անմիջապես, կամ էլ հինգ օրվա ընթացքում, ուստի նրանք ստիպված են լքել իրենց տներն ու շարժական գույքի մեծ մասը և նույնիսկ չեն էլ հասցնում վերցնել իրենց հետ սննդամթերք և ապրելու համար այլ միջոցներ: Հասնելով նոր բնակավայրեր՝ իրենց նկատմամբ թշնամաբար տրամադրված մարդկանց շրջանում նրանք անօգնական և անպաշտպան են դառնում: Մեր այցելած մի շարք տեղերում տեղի են ունեցել խժդժություններ. հայտնեցին, որ Դիարբեքիրից Մոսուլ աքսորված բոլոր հայերը սպանվել են ճանապարհին...

Պարզ դարձավ, որ հայերի տեղահանությունը կատարվում է ոչ միայն ռազմական նկատառումներով: Ներքին գործերի նախարար Թալեաթը վերջերս այս մասին բացահայտ կերպով հայտարարեց մեր դեսպանատան աշխատակից դոկտոր Մորդմանին: Թալեաթը ասաց, որ Բարձր Դուռն ուզում է օգտվել համաշխարհային պատերազմից, որպեսզի երկիրը լրիվ մաքրվի ներքին թշնամիներից (տեղացի քրիստոնյաներից)՝ առանց արտասահմանյան խանգարիչ դիվանագիտական միջամտության»:[71]

18 հունիսի

• Սկսվում է Սեբաստիայի նահանգի Տիվրիկ քաղաքի հայերի տեղահանությունը:[72]

• Խարբերդից տեղահանվում են 275 մտավորականներ և հայ լուսավորչական եկեղեցու առաջնորդը: Այս խումբը կոչվեց «առաջնորդի խումբ»:[73]

• Խարբերդից գերմանական հյուպատոսը դիմում է դեսպան Վանգենհայմին, որ վերջինս միջամտի և թույլ չտա Խարբերդի առևտրական հայերի ու քաղաքականապես անմեղ մարդկանց տեղահանությունը, քանի որ նրանք իրենց զենքերը կառավարությանը հանձնելուց հետո որևէ լուրջ վտանգ չէին կարող ներկայացնել:[74]

• Կոստանդնուպոլսից ԱՄՆ-ի դեսպան Մորգենթաուն հեռագրում է պետքարտուղարին. «Մեծ վեզիր Սայիդ Հալիմը ափսոսանք հայտնեց անձամբ պատասխանատու նկատվելու համար (հակահայ միջոցառումների կապակցությամբ) և վրդովմունք՝ օտար կառավարությունների կողմից Օս-

մանյան կայսրության հայ հպատակների նկատմամբ իր վեհապետական իրավունքներին միջամտելու փորձի համար: Միաժամանակ հայերի դեմ հալածանքները խստանում են: Երեք աչքի ընկնող հայ պատգամավորներ՝ Զոհրապը, Բրենդին (Համբարձում Բոյաջյանը), Չրաջյանը ձերբակալվել են, և 20 հայեր էլ կախաղան են հանվել՝ անջատողական դավադրության շինծու մեղադրանքով: Լուրեր են պտտվում, թե պատրաստվում են իրականացնելու նոր մահապատիժներ: Իմ հաճախակի դիմումներն ի զորու չեղան նրանց հետ պահել իրենց բռնած ուղուց, որը փորձում են արդարացնել ռազմական անհրաժեշտության պատճառաբանությամբ»:[75]

• Գերմանա-հայկական ընկերության անունից Յ. Լեփսիուսը հայտնում է արտաքին գործերի նախարարություն, որ Սոֆիայից ստացված մի հեռագրի համաձայն «...աքսորված հայերից առայժմ միայն Ակնունին, Խաժակը, Զարդարյանը և Մինասյանն են ուղարկվել ռազմական դատարան: Հայաստանը մաքրում են հայերից: Երզնկայից, Մարաշից, Հաճնից, Այնթապից հայ բնակչությունը ուղարկվել է Միջագետք: Ամբողջ Կիլիկիայում կատարվում է բոլոր հայերի զանգվածային տեղահանություն: Կոստանդնուպոլսից նույնպես: Համընդհանուր հուսահատություն է տիրում»: Իսկ Սոֆիայից ստացված երկրորդ հեռագրում նշվում է. «Կոստանդնուպոլսում մահապատժի են ենթարկվել 20 հնչակյան գործիչներ: Նույն ճակատագիրն է սպասվում Անգորա ուղարկված դաշնակցականներին: Խնդրում ենք ամեն ինչ անել այս դժբախտությունը կանխելու համար»:[76]

• Գերմանիայի դեսպան Վանգենհայմը՝ ռայխսկանցլեր Բեթման-Հոլվեգին ուղարկված զեկուցագրում նշում է, որ հունիսի 15-ին Կ. Պոլսում կախաղան են բարձրացվել 20 հնչակյան գործիչներ, որի մասին «...տեղական թերթերը հայտնել են միայն ամսի 17-ին և որտեղ եղել է նաև մահապատժի ենթարկվածների անունները... Եվ ինչպես երևում է դրանից, սպասվում են նոր մահապատիժներ...»:[77]

• Գերմանիայի արտաքին գործերի նախարարությունը դիմում է Թուրքիայի կառավարությանը՝ ապրիլի 25-ին Պոլսում ձերբակալված հայ մտավորականների հարցով, բայց՝ անօգուտ:[78]

• Երզնկայում թուրք վիրավոր զինվորներին խնամող գերմանուհի քույր Եվա Էլվերսն իր հուշերում գրում է, որ «...ամսի 18-ի երեկոյան մի թուրք ոստիկան իրեն ասել է, որ իրենք Բայբուրդից կանանց ու երեխաների մի քարավան են բերել և վրդովված ավելացրել, որ իրենց հրամայված էր ճանապարհին նրանց կոտորելով տեղ հասցնել: Օրական 10-12 մարդ էր սպանվում և գցվում ձորը: Երեխաներին, որոնք այլևս չէին կարողանում քայլել, սպանում էին՝ գլուխները ջարդելով, իսկ կանանց ամեն մի նոր գյուղի մոտ տանում և բռնաբարում էին...»:[79]

• Կոստանդնուպոլսում ավստրոհունգարական գլխավոր հյուպատոսությունից արտաքին գործերի նախարար բարոն Բուրիանին ուղղված զեկուցագրում հայտնվում է. «Վերջին ժամանակներս բուն Կոստանդնուպոլսում և նահանգներում բազմաթիվ հայեր ռազմական դատարանի կողմից դատապարտվել են մահապատժի՝ կախաղան հանելու միջոցով և սպանվել: Երկու օր առաջ այստեղի ռազմական նախարարությունում 20 հայեր ենթարկվեցին նման մահապատժի: Հայերի դեմ այդ խիստ միջոցառումներն ակնհայտորեն կապված են Հայաստանում հեղափոխական իրադարձությունների և, հատկապես, ռուսների դեպի Վան կատարած առաջխաղացման հետ: Առաջիկայում շարունակվելու են բազմաթիվ ձերբակալությունները Փոքր Ասիայում:

Քրիստոնյա ազգաբնակչության վրա թուրքական կառավարության այս դաժան գործելակերպը շատ վատ տպավորություն է թողնում: Բուն երիտթուրքական շրջաններում ևս այս ձերբակալություններն ու մահապատիժները, որոնք իրականացվում են Թալեաթ բեյի նախաձեռնությամբ, անհաջող քաղաքականություն են համարվում»:[80]

• Էրզրումում գերմանական հյուպատոս Շոյբներ-Ռիխտերը Կոստանդնուպոլսի իրենց դեսպանատուն ուղարկած հաղորդագրության մեջ ասվում է. «Էրզրումի շրջանից տեղահանված հայերը Երզնկայից Խարբերդ ընկած ճանապարհին ենթարկվել են քրդերի և նման թափթփուկների հարձակման, տղամարդիկ և երեխաները մեծ մասամբ սպանվել են, կանայք՝ առևանգվել են: Կառավարությունը չի կարողանում և չի ուզում պաշտպանել տեղահանվածներին: Ես ի՞նչ քայլեր ձեռնարկեմ՝ կանխելու համար հետագա կոտորածները»:[81]

• Վիեննայի "Arbiter Zeitung", "New Freie Presse" և "Reichspost" թերթերը «Քսան հայերի կախեցին» և «Հայկական դավադրություն» վերնագրերով տպագրել են Կոստանդնուպոլսի կայազորի հրամանատարության ամսի 17-ի հաղորդագրությունը՝ կախաղան բարձրացված հնչակյանների մասին, որտեղ նշվում է, թե իբր, «...այդ անձինք փորձել են կայսրության մի մասը դուրս բերել թուրքական տիրապետության տակից՝ անկախ Հայաստան ստեղծելու համար...»::[82]

19 հունիսի

• Էրզրումից հեռանում է տեղահանված հայերի երկրորդ խումբը՝ թվով մոտ 3000 հոգի: «Նրանց մի մասը, մասնավորապես տղամարդիկ, առևանձնացվեցին, որոնց գտնվելու վայրն անհայտ է: Ըստ երևույթին նրանց սպանել են»,- գրում է հյուպատոս Շոյբներ-Ռիխտերը օգոստոսի 5-ին Գերմանիայի դեսպան Հոհենլոհե-Լանգենբուրգին հղած իր տեղեկագրում:[83]

• Բաղդադից ամերիկյան հյուպատոս Չ. Բրիսելը դեսպան Մորգենթաուին գրում է, որ Բաղդադի հայկական համայնքը, հիմք ունենալով ստացված բազմաթիվ զեկույցները, հայտնում է, որ Վանում և Դիարբեքիրում հայերը ենթարկվում են կոտորածների, որոնք կրում են համատարած բնույթ: «Հայկական համայնքը խնդրում է դեսպանին հնարավորին կերպով թեթևացնել հայերի վիճակը: Հավատում են, որ այնտեղ կոտորածներ չեն լինի»:[84]

• Մայիսի սկզբին Դիարբեքիրում ձերբակալված 635 անվանի հայեր գնդակահարվում են Քեղվանոս կոչված ձորում՝ Ամարո անունով քուրդ հանցագործի ղեկավարությամբ:[85]

20 հունիսի

• Ուրֆայում գերմանացի սարկավագ Յ. Կյունցլերի՝ իրենց հյուպատոսին Ռյոսլերին ուղղված զեկուցագրում, ներկայացնելով քաղաքում և շրջակայքում տիրող իրավիճակը, նշում է, որ քաղաքում տեղի են ունենում կամայական ձերբակալություններ, բանտարկում են նաև կրոնական առաջնորդներին, կիրառվում է մարմնական պատիժ, քաղաքը շրջափակվել է զինվորներով:

Բացի այդ, սարսափելի լուրեր են ստացվում Դիարբեքիրի վիլայեթից, որոնք իսպանական ինկվիզիցիան են հիշեցնում. «... ասում են շատ տեղերում միայն խոշտանգումներից հետո են արձակում փրկարար գնդակը: Առավել սիրված միջոց է եղունգների հանելը: Այդ տեղեկությունները

մեզ են հասնում քրիստոնյա և մահմեդական բնակիչների վկայություններից, որոնք համընկնում են իրար հետ: Ասում են, որ քաղաքներում և գյուղերում տեղի են ունեցել ջարդեր:

Վանում տիրող իրավիճակի մասին այնտեղից եկած մի մահմեդական հաղորդեց հետևյալը՝ Վան եկան շրջակայքում բնակվող քրդերը, և սկսեցին հայերին սպանել, որոնք միայն պաշտպանվում էին: Անմիջապես քրդերին օգնության եկան այնտեղ գտնվող զինվորները, այնուհետև արյունալի մարտից հետո հայերը փախուստի մատնեցին և՛ քրդերին, և՛ զինվորներին ու դարձան քաղաքի տերը:

Բավականին ցավալի երևույթ էր հայկական քաղաքների բնակչության տեղահանությունը և նրանց տեղափոխումը չբնակեցված, կործանարար վայրեր: Այսպես, այս տեղերով գրեթե ամեն օր անցնում են Զեյթուն, Հաճն, Ալբիստան քաղաքներից եկող հայ բնակչության շարասյունները, որոնք բոլորն անխտիր գտնվում են ընկճված վիճակում: Հիվանդներին և մահացողներին թողնում էին ճանապարհներին: Ես ինքս տեսել եմ ճանապարհին ընկած մի 80-ամյա ծերունու, որը կաթվածահար էր եղել: Կառավարությունը որոշում է ընդունել, որ այդ հայերին ոչ մի դեպքում որևէ օգնություն չցուցաբերվի: Իսկ ի՞նչ պետք է լինի այդ խեղճերի հետ: Նրանք պետք է բնակվեին չբնակեցված, ջրազուրկ Ջեբել Աբդուլ Ազիզում...

Ուրֆայի հայ կաթոլիկ առաջնորդը նահանգապետին երեկ տեղեկացրեց այն մասին, որ հայկական Քարմուջ գյուղին մոտ սարերում՝ Ուրֆայի մոտ, գտնվում են վտանգավոր զինված հայեր Սավարակից ու Դիարբեքիրից, մարդիկ, որոնք թեպետ և հրաժարվել են իրենց կյանքից, բայց ցանկանում են կռվել թուրքերի դեմ, որոնք իրենց քաղաքներում կրկին խոշտանգել և սպանել են իրենց եղբայրներից շատերին:

Մեծարգո պարոն հյուպատոս: Երբ ես հետևում եմ հայ ժողովրդի դրությանը և հետո հիշում եմ թուրք հայտնի մայոր Հաֆիզ բեյի խոսքերը, որն ասում էր, թե այս պատերազմից հետո իրենք պետք է ոչնչացնեն հայ ժողովրդին կամ նրան հարկադրեն տեղահանության, վախենամ, որ պատերազմի ժամանակը օգտագործվում է նրա համար, որ որքան հնարավոր է շատ կրճատվի այդ խելացի ժողովրդի թվաքանակը»:[86]

• Բեյրութից ԱՄՆ-ի հյուպատոս Սթենլի Հոլիսի կողմից պետական քարտուղար Բրայենին ուղարկած ամերիկյան մի ականատես քաղաքացու զեկուցագրում նշվում է. «Տեղահանությունն սկսվեց վեց շաբաթ առաջ Զեյթունից 180 ընտանիքների արտաքսումով, և այդ ժամանակվանից տեղահանվել են այդ քաղաքի և շրջակա գյուղերի բոլոր բնակիչները, ինչպես Հաճնի, Սիսի, Կարսի, Բազարի, Հասան Բեյլիի և Դեորթ Յոլի քրիստոնյա բնակչության մեծ մասը:

Տեղահանումը դեռևս շարունակվում է, և հայտնի չէ, թե որքա՞ն կարող է ընթանալ, արդեն հրապարակած հրամանի համաձայն այս շրջանում նրանց թիվը կհասնի 36000-ի, իսկ Այնթապից դեռ ոչ ոքի չեն արտաքսել, Մարաշից և Ուրֆայից տեղահանվել են շատ քչերը...

Ղեկավարների կարգադրությունները գուցե եղել են բավականին մարդասիրական, սակայն ժողովրդի տեղահանումը մեծ մասամբ եղել է անտեղի կերպով խիստ, շատ դեպքերում զուգակցված ահավոր դաժանությամբ կանանց ու երեխաների, հիվանդների ու ծերերի նկատմամբ...

Շատ դեպքերում տղամարդկանց (զինվորական հասակի տղամարդիկ գրեթե բոլորը բանակում էին) պարաններով ու շղթաներով ամուր կապում էին միմյանց: Կանայք, ովքեր ձեռքերում ունեին փոքր երեխաներ

կամ հղիության վերջին օրերին էին, քշվում-տարվում էին մտրակներով, ինչպես նախիր: Լսել ենք երեք տարբեր դեպքերի մասին, երբ կինը ծննդաբերել է ճանապարհին, և որովհետև նրա դաժան ուղեկցողը շտապեցրել է նրան, կինը ճանապարհին մահացել է արյունահոսությունից: Գիտեմ նաև մի դեպքի մասին, երբ հսկիչ-ուղեկցողը այնքան բարի է եղել, որ թույլ է տվել խեղճ կնոջը հանգստանալ մի քանի ժամ, և հետո նրա համար մի սայլ է ձեռք բերել, որպեսզի նա դրանով ճանապարհվի: Մի քանի կանայք այնքան հոգնած ու հուսահատված էին, որ իրենց նորածիններին թողել էին ճանապարհին...

Այս մարդկանց ցրում էին փոքր խմբերով, երեք կամ չորս ընտանիք բնակեցնում էին ուրիշ ազգի ու կրոնական պատկանելիության բնակչների մեջ, որոնք խոսում էին ուրիշ լեզվով: Ես նրանց մասին խոսում եմ որպես ընտանիքների, սակայն նրանց չորս հինգերորդը կանայք ու երեխաներ են, և եթե նրանց մեջ տղամարդիկ կան, ապա նրանք մեծ մասամբ ծեր են և անկարող:

Եթե հաջորդ մի քանի ամսում միջոց չգտնվի նրանց օգնելու, քանի դեռ նրանք չեն հիմնավորվել նոր միջավայրում, նրանց երկու երրորդը կամ երեք քառորդը կմեռնի սովից ու հիվանդությունից»:[87]

• Թուրք ոստիկանները հավաքում են Խարբերդի նահանգի Մալաթիա գավառի Մշովկա և Անսուր հայկական գյուղերի 15-70 տարեկան բոլոր տղամարդկանց և մոտակա ձորում գնդակահարում, իսկ կանանց ու երեխաներին՝ աքսորում:[88]

21 հունիսի

• Թուրքական կառավարությունը պաշտոնանկ է անում Ադանայի նահանգապետ Ջելալ բեյին, որը հայերի կոտորածներին դեմ էր և ոչ մեկին չէր տեղահանել: Այս առիթով Հալեպում գերմանական հյուպատոս Ռյոսլերը դեսպան Վանգենհայմին գրում է. «Հավանաբար կառավարությունը ցանկանում է այստեղ ևս ազատ գործելու հնարավորություն ունենալ»:[89]

• Պատասխանելով Էրզրումի գերմանական հյուպատոս Շոյբներ-Ռիխտերի հունիսի 18-ի՝ տեղահանված հայերին քրդերի և նման խուժանի կողմից կատարվող հարձակումների վերաբերյալ զեկուցագրին, դեսպան Վանգենհայմն առաջարկում է նահանգապետին հայտնել, որ «...այսպիսի ամոթալի դեպքերը վնասում են կառավարության վարկին Թուրքիայի բարեկամների ու չեզոք երկրների մոտ և իշխանություններին հեղինակազրկում երկրի ներսում: Ռուսների և հայերի պատժամիջոցներն ու վրեժխնդիր գործողությունները նրանց կողմից գրավված շրջաններում հանդիսանում են այս ամենի անխուսափելի հետևանք՝ կդժվարանա նաև Թուրքիայի դիրքն ապագա հաշտության բանակցությունների ժամանակ և կրկին առիթ կտրվի հզոր պետություններին խառնվելու հայկական գործերին: Եթե մենք չենք կարող առարկել այդ միջոցառումների դեմ, քանի որ դրանք արդարացվում են պատերազմական վիճակով, ապա պետք է էլ ավելի ակտիվորեն ջանանք, նաև հանուն մեր շահերի, որպեսզի անզեն բնակչության նման կոտորածներ տեղի չունենան...»:[90]

• Գերմանական Կարմիր խաչի երկու հիվանդապահուհիներ, որ Երզնկա քաղաքից գնում էին Կարին, ճանապարհին հանդիպում են սարսափելի տեսարանների: Նրանք պատմում են, որ կանանց կապել էին իրար, որպեսզի Քեմախի կիրճում, ժայռերի կատարներից Եփրատի մեջ գցեն: Իսկ հիվանդապահուհիներին ուղեկցող ժանդարմը պատմել է, որ ին-

քը Մամախաթունից 3000 երեխաների ու կանանց մի քարավան է բերել Քեմախի կիրճ: Թե ինչո՞ւ նրանց գյուղերում չեք սպանում, եթե ուզում եք սպանել հարցին նրանք պատասխանում են. «Իսկ ի՞նչ պիտի անենք նրանց դիակները, որոնք շատ պիտի հոտեն»:[91]

22 հունիսի

• Օսմանյան խորհրդարանի երեսփոխան Վռամյանը դավադրաբար սպանվում է Վանից Բաղեշ ընկած ճանապարհին:[92]

• Սկսվում են տեղահանություններն Իզմիթի նահանգում:[93]

• Յոհաննես Լեփսիուսը Գերմանիայի արտաքին գործերի նախարարությանն ուղարկած նամակում, անդրադառնալով հայերի զանգվածային ցեղասպանություններին՝ Զեյթունի օրինակով ցույց է տալիս թե ինչպես էին դրանք կատարվում: Նա գրում է, որ Զեյթունի 27000 հայ բնակչությունից առանձնացրել են տղամարդկանց և քշել Տեր Զորի անապատները, իսկ կանանց՝ 500 կիլոմետր հեռու, Անգորայի նահանգ: Աքսորի ժամանակ երիտասարդ աղջիկներին բռնի կերպով տարել են հարեմներ, իսկ մուսուլմանական գյուղերում կանանց բռնաբարում էին: «Այդ նույն ժամանակ Զեյթուն բերված բոսնիացի մուսուլմանների համար կառավարությունը 20000 թուրքական ֆունտ էր հատկացրել, իսկ հայերը զրկվել էին իրենց ունեցվածքից և առանց միջոցների աքսորվել են: Թուրքական կառավարության այս միջոցառումները, ինչպես հին ասորացիների տեղահանությունը, չեն կարող արդարացվել զինվորական նպատակներով, այլ միայն քրիստոնյաների քողարկված կոտորած է: Այն իր չափերով, ինչպես երևում է, գերազանցում է Աբդուլ Համիդի կոտորածներին...

Թուրքական ներկայիս իշխանությունների կողմից իրականացվող բնաջնջման քաղաքականության հետևանքով ամբողջ հայ ազգին (2 մլն. ռուսահայեր և 2 մլն. թուրքահայեր) հետևողականորեն ներշնչվում է ատելություն թուրքերի հանդեպ, ինչը բխում է միայն Անտանտի երկրների շահերից և վերին աստիճանի վնասակար է Գերմանիայի ազդեցության համար Թուրքիայի տնտեսական զարգացման վրա, որը հիմնականում ընկած էր հայերի ուսերին: Օրինակ, Կիլիկիայից հայերի տեղահանության հետևանքով, այնտեղի գերմանական ձեռնարկությունները (բամբակագործական ընկերությունները և այլն) զրկվեցին ողջ աշխատուժից»:[94]

23 հունիսի

• Խարբերդում ձերբակալված հայերի առաջին խումբը դուրս է բերվում գիշերով քաղաքից և տարվում անհայտ ուղղությամբ: Հարյուրավորներ հաշվվող այդ խմբում, ինչպես հաղորդում է դեսպան Մորգենթաուին գրած իր տեղեկագրում տեղի ամերիկյան հյուպատոս Լեսլի Դեյվիսը, եղել են ամերիկյան քոլեջի պրոֆեսորներ, Խարբերդի Գրիգորյան եկեղեցու քահանան և այլ նշանավոր հայեր: Ավելի ուշ հայտնի է դարձել, որ գրեթե բոլոր տղամարդկանց կոտորել են Արղանա Մադենի մոտերքում, Խարբերդից Դիարբեքիր տանող ճանապարհի միջնամասում:[95]

24 հունիսի

• Տրապիզոնի և Սամսոնի շենքերի պատերին փակցվում են հայտարարություններ, որոնցով կառավարությունը բոլոր հայերին պարտավորեցնում է 5 օրվա ընթացքում հեռանալ քաղաքից: Միաժամանակ Սամսոնում հեծյալ ժանդարմները շրջում էին փողոցներում և կատարում բազմաթիվ

ձերբակալություններ:[96]

• Խարբերդից բերված 800 հայ բանտարկյալներ խողխողվում են Հերօղլի լեռան ստորոտում:[97]

• Սկսվում են տեղահանությունները Շաբին-Գարահիսարում և Խարբերդի նահանգի Հապուսի գյուղում:[98]

• Հալեպից Ավստրո-Հունգարիայի հյուպատոս Ալոիս-Դանդինին հեռագրում է արտաքին գործերի նախարար Բուրիանին, որ. «Ներկայումս Հալեպում կան 6000 հայեր, որոնք Դ-յորթ-Յոլից և երկրի խորքի ուրիշ քաղաքներից այստեղ են արտաքսվել՝ հասարակական կարգը պահպանելու համար»:[99]

• Բուլղարիայի հայերի առաջնորդ Ղևոնդ եպիսկոպոս Դուրյանը մի տեղեկագիր է ուղարկում Պողոս Նուբար փաշային՝ նկարագրելով հայկական նահանգներում և Կիլիկիայում հայերի ծանր վիճակը:[100]

• Տրապիզոնում Իտալիայի հյուպատոս Գորինին Հռոմի «Մեսաջերո» թերթում պատմելով իր տեսածները՝ հայտնում է. «Հունիսի 24-ին հայերին Տրապիզոնից հանեցին: Տեղական իշխանությունները, նույնիսկ մի քանի մահմեդականներ փորձեցին որոշ հայերի թաքցնել, բայց իզուր: Կոստանդնուպոլսից հրամանը կտրուկ էր, և բոլորը պետք է ենթարկվեին: Անհնար է նկարագրել հուսահատական տեսարանները, արցունքները, հայհոյանքները, պատիվը փրկելու համար կատարված ինքնապաշտպանական փորձերը, հանկարծակի խելագարությունները, կրակոցները, հրդեհները... Երբ մեկ ամիս շարունակ ականատես ես լինում ամենօրյա այսպիսի սարսափելի տեսարանների՝ առանց ի վիճակի լինելու ինչ-որ բան անելու, զարմանում ես, միթե ողջ աշխարհի գիշատիչ գազանները հավաքվել են Կոստանդնուպոլսում: Եթե մարդիկ իմանային այն, ինչ ես գիտեմ, տեսնեին այն, ինչ ես եմ տեսել և լսեին այն, ինչ ես եմ լսել, չեզոք քրիստոնյա երկրները դուրս կգային Թուրքիայի դեմ և կնզովեին այդ բարբարոս կառավարությանը»:[103]

• Տրապիզոնում Գերմանիայի հյուպատոսը՝ դ-ր Բերգֆելդը, ռայխսկանցլեր Բեթման-Հոլվեգին հուլիսի 9-ին զեկուցում է, որ հայկական կոմիտեի բոլոր առաջնորդները «հունիսի 24-ին ձերբակալվում և Սամսոնի միջով ուղարկվում են երկրի խորքը: Նույն օրը ես իմացա, որ հաշվարկը՝ բոլոր հայերին տեղահանելն է»: Նա հայտնում է, որ Տրապիզոնի նահանգում տեղահանվել են մոտ 30000 մարդ, որը կանանց և երեխաների շրջանում պատճառ է դարձել մեծաքանակ զոհերի:[102]

• Տրապիզոնից ավստրո-հունգարական հյուպատոս ֆոն Կվյատկովսկին դեսպան Պալավիչինիին հաղորդում է. «Հայերի պաշտոնական զտումները շարունակվում են բազմաթիվ վայրերում: Այսպես Երզնջանից և Բայբուրդից հայերը ստիպված են եղել գաղթել, և նույն ճակատագիրն է սպասվում նաև Տրապիզոնում, որտեղ միայն քաղաքում 300 հայկական ընտանիք է ապրում...»: Իսկ Կվյատկովսկու այն հարցին, թե ինչպե՞ս վարվի կաթոլիկ հայերին (Մխիթարյան հոգևորականներին) տեղահանելիս, Պալավիչինին պատասխանում է, որ ինքն այս հարցում կրավորական դիրք պիտի գրավի՝ ելնելով քաղաքական իրավիճակից, որպեսզի «չվիրավորի թուրքերի դյուրազգացությունը»:[103]

• Կոստանդնուպոլսում Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալավիչինին արտաքին գործերի նախարար բարոն Բուրիանին գրում է. «Կասկած չկա, որ կառավարության գործելակերպը հայերի նկատմամբ սխալ էր: Վերջիններս թուրքերի նկատմամբ վաղուց ի վեր թշնամաբար էին տրա-

մաղրված, սակայն նրանք ռուսների բարեկամն էլ չէին, որովհետև իրենց ազատախոհ միտումների շնորհիվ Ռուսաստանի նկատմամբ առանձնակի համակրանք չեն տածում: Սակայն թուրքերի սնանկ քաղաքականության հետևանքով հայերը երկու չարիքներից ընտրեցին փոքրագույնը և ընկան ռուսների գիրկը»: Միաժամանակ դեսպանը համոզմունք է հայտնում, որ թուրքական կառավարության գործելակերպի հետևանքով, հայկական հարցն այնպիսի փուլ է թևակոխել, որը, իրոք, թուրքերի համար վտանգավոր կարող է դառնալ՝ հատկապես, եթե ռուսները շարունակեն առաջխաղացումը Հայաստանում: Այդ դեպքում հայերն, անշուշտ, անվերապահորեն կմիանան նրանց»:[104]

• «Շրջափակման երեսուն օրեր» վերնագրով հոդվածում "Кавказское слово" թերթի թիվ 142-ում նշվում է. «Ռուս-թուրքական պատերազմի հենց սկզբից Վանի նահանգի (ինչպես և ամբողջ Թուրքիայի) հայերն ապրում էին կոտորածի մշտական սարսափի տակ...

Վանի հայտնի հայ քաղաքական գործիչներ Վռամյանի (թուրքական պառլամենտի անդամ), Իշխանի և Արամի բոլոր ջանքերն ուղղված էին դժբախտությունը կանխելուն: Եվ Վանի նահանգապետի հետ բանակցությունների միջոցով նրանց հաջողվեց մինչև ապրիլ ամիսը կանխել կոտորածը...

Ռուս-թուրքական ռազմաճակատում և Դարդանելում ունեցած անհաջողություններից հետո թուրքերի կատաղությունը հայերի դեմ սկսեց աճել: Ամբողջ երկրով մեկ զգացվում էր, որ իրականացվում է բոլոր հայերին ոչնչացնելու թուրքական ծրագիրը...»:[105]

25 հունիսի

• Բիթլիսում սկսվում են հայերի կոտորածները: Դա Ջևդեթ բեյը, որ իր 8000 զինվորներով փախել էր Վանից և ճանապարհին Սղերդի հայերի մեծ մասին ջարդելուց հետո պաշարում է Բիթլիսն ու սկսում կոտորածը: Երիտասարդ ու գեղեցիկ կանայք և երեխաները բաժանվում էին թուրքերին, իսկ մնացածները՝ խեղդամահ էին արվում Տիգրիսի ջրերում: Այսպես է ոչնչանում Բիթլիսի 15000 հայ բնակչությունը:[106]

• Պոլսում Զավեն պատրիարքը հանդիպում է կրոնական հարցերով նախարար Փիրիզադե Իբրահիմի հետ, որը նրան հասկացնում է, որ ոչ մեկն իրավունք չունի միջամտելու հայերի դեմ ձեռնարկված միջոցառումներին: «Եթե պետությունն ուզում է արտաքսել հայերին՝ դուք և ես, որպես կրոնի նախարար, միջամտելու իրավունք չունենք...»:[107]

• Ուրֆայում երկու ժամվա ընթացքում ձերբակալվում և բանտարկվում են հարյուրից ավելի հայեր՝ կուսակցականներ, առևտրականներ, մտավորականներ և արհեստավորներ:[108]

• Գերմանիայի դեսպան Վանգենհայմը Տրապիզոնի իրենց հյուպատոսին գրում է. «Վերջերս Էրզրում, Դիարբեքիր և այլ տեղեր աքսորված հայերը կրկին ենթարկվել են ելուզակների հարձակմանը, կարծում եմ սպանվել են հենց ուղեկցող անձնակազմի կողմից...» և խնդրում է խորհուրդ տալ վալիին, որ հոգ տանի հայերի պաշտպանության համար:[109]

• Կահիրեում ռուսական դեսպանորդ Սմիրնովն արտաքին գործերի նախարար Սազոնովին հղած հաղորդագրության մեջ հայտնում է. «Սիրիայում և նրա հարակից շրջաններում հայերի հանդեպ կատարված դաժանությունները հասնում են անհավատալի չափերի: Թալանը, բռնությունները, կոտորածը և հաճախ բոլոր հայկական գյուղերի գլխովին ոչնչացումը

կրկնվում են անընդհատ, ընտանիքներն անողոքաբար բաժանվում են, կանանց խլում են տղամարդկանցից, երեխաներին՝ ծնողներից և բոլորին աքսորում տարբեր ուղղություններով: Հատկապես դաժանորեն հետապնդվում է հայ հոգևորականությունը, նրանց տանջում են, խոշտանգում և պոկում են եղունգները...»:[110]

26 հունիսի

• Խարբերդում տիրող ծանր ու հուսահատ վիճակը տեսնելով՝ տեղի գերմանացի հյուպատոս քարոզիչ Էհմանը դիմում է դեսպան Վանգենհայմին, գրելով. «... հիմա էլ հրաման է արձակվել՝ գավառի և քաղաքի ամբողջ քրիստոնյա բնակչությանն անխտիր բռնագաղթի ենթարկել: Հանուն մարդասիրական սկզբունքի խնդրում եմ բարեխոսել, որ անմեղների, թույլերի և ծերերի հանդեպ գութ ցուցաբերվի»:[111]

• «Հունիսի 26-ին Տրապիզոնի հայերից պահանջեցին հինգ օրից հետո պատրաստ լինել տեղափոխվելու երկրի խորքերը,- նշում է հուլիսի 9-ին ռայխսկանցլեր Բեթման-Հոլվեգին հղած տեղեկագրում Տրապիզոնի գերմանական հյուպատոս Բերգֆելդը,- և այդ ընթացքում հայերին որևէ ապրանք արգելվում էր վաճառել: Խանութներն ու պահեստները պետք է կնքվեին և բնակարաններից բոլոր իրերը տարվեին որոշակի տեղեր և հանձնվեին պետական պահպանության, իսկ փողերը պետք է հանձնեին փոստատներին»:[112]

• Սկսվում է Մարզվանի 15000 հայության բռնագաղթը և ջարդը՝ այնպես, ինչպես դեռ գարնանը հայտարարել էր Սեբաստիայի նահանգապետ Մուամերը՝ ասելով, որ հայերը պետք է հրով ու սրով բնաջնջվեն: Թուրք ոստիկանները շուկաներում և փողոցներում հավաքում էին բոլոր հայ տղամարդկանց, այնուհետև խումբ-խումբ դուրս բերում քաղաքից և Էշեկ Թերեսի կոչված վայրում հանձնում կացիններով զինված թուրք գյուղացիներին: Այս եղանակով կոտորվում են շուրջ 5000 հայեր:[113]

• Կոստանդնուպոլսում կաթոլիկ հայերի պատրիարք Թերզյանը՝ Հովհ. Արք. Նազլյանի և իր տեղապահի հետ այցելում է Գերմանիայի դեսպան Վանգենհայմին ու տեղեկացնում նրան հայերի համընդհանուր տեղահանության և կոտորածների մասին: Դեսպանը պատասխանում է, որ դա միայն ռուսական սահմանին մոտիկ քաղաքներում է կատարվում և տեղահանում են միայն զենք կրելու ընդունակ մարդկանց: Միաժամանակ դեսպանը շեշտում է, որ հայերի տարագրությունը Թուրքիայի ներքին գործն է, և նրանք ոչ մի օտար միջամտություն չեն ընդունում: Բայց վերջում, ասելով, որ իր միջամտությունը կարող է վնասել հայերին՝ այնուամենայնիվ խոստանում է դիմել Բ. Դռանը:[114]

• Տրապիզոնում Ավստրո-Հունգարիայի գլխավոր հյուպատոս Կվյատկովսին Կոստանդնուպոլսում իրենց դեսպանին ուղարկած հեռագրում նշում է, որ թուրքերը Տրապիզոնի հայերին ուզում են Մոսուլ տանել, և ինքը թուրքական իշխանություններին զգուշացրել է դրա քաղաքական ու տնտեսական ծանր հետևանքների մասին, միաժամանակ նշելով, որ բռնադատվածների, այդ թվում կանանց ու երեխաների համար դա բացահայտ մահ է նշանակում, քանի որ ոտքով Մոսուլ գնալը վարակված ճանապարհներով, սննդամթերքի և օթևանի բացակայության պայմաններում, հավասար է մահվան:[115]

• Խարբերդի ամերիկյան հյուպատոս Լեսլի Դեյվիսը հունիսի 30-ին դեսպան Մորգենթաուին ուղարկած տեղեկագրում հայտնում է. «Հունիսի

26-ին, շաբաթ օրը հայտարարեցին, որ հինգ օրվա ընթացքում բոլոր հայերն ու ասորիները պետք է հեռանան այստեղից... (Խարբերդ, Մամուրեթ-ուլ-Ազիզ) քաղաքներում ենթադրաբար քառասուն հազար հոգի է ապրում, որոնցից առնվազն տասնհինգ կամ տասնութ հազարը հայեր են: Ավելի շատ հայեր կան հարևան գյուղերում, որոնք ևս մի քանի օրից պետք է թողնեն իրենց տները: Ջարդը, որքան էլ սարսափ հարուցի բառը, բոնագաղթի համեմատությամբ ավելի մարդկային կլինի: Կոտորածից հետո ոմանք թերևս ողջ մնան, մինչդեռ նման երկրում համընդհանուր տեղահանություն նշանակում է յուրաքանչյուրի համար թեև դանդաղ, բայց, թերևս, անհամեմատ ահավոր մահ: Ես չեմ հավատում, որ հարյուրից, հազարից մեկն անգամ ողջ կմնա: Այստեղից մեկնողների հավանական հանգրվանը հայտարարված է Ուրֆան, բայց ես շատ լավ գիտեմ, որ խոսքը քաղաքի մասին չէ, այլ հարավ-արևելք ընկած Միջագետքի հարթավայրի, որտեղ չի կարող ապրել ո՛չ մարդը, ո՛չ էլ անասունը...»:[116]

• «Տեղահանված հայերի երրորդ խումբը՝ մոտավորապես 300 ընտանիք, դուրս եկավ Էրզրումից հունիսի 26-ին: Նրանք հասան մինչև Երզնջան»,- գրում է տեղի գերմանական հյուպատոս Շոյնբեր-Ռիխտերը դեսպան Հահենլոհե-Լանգսբուրգին ուղարկած իր տեղեկագրում:[117]

27 հունիսի

• Տրապիզոն նահանգի Սամսոն քաղաքում սկսվում են տարագրությունները: Միայն հիսուն ընտանիք կրոնափոխ լինելով՝ չտեղահանվեց: Որոշ թվով մարդիկ էլ, բարձրանալով անառիկ լեռները՝ մինչև 1923թ. անհավասար կռիվներ մղեցին և կարողացան նավակներով (700 հոգի) հասնել ռուսական սահման:[118]

• Կոստանդնուպոլսում Զավեն պատրիարքը հանդիպում է Թուրքիայի վարչապետ Սաիդ Հալիմ փաշային, որը պնդում է, որ հայերի տարագրության հարցում կառավարության որոշումը վերջնական է և անհրաժեշտ:[119]

• Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալավիչինին գրում է իրենց արտաքին գործերի նախարար բարոն Ստ.Բուրիանին, որ Տրապիզոնից իր ստացած տեղեկությունների համաձայն այնտեղի հայերի վիճակը շատ ողբերգական է: «...Սակայն ուրիշ տեղերում իրենց հայրենիքից բռնագաղթած հայերը ոչ միայն մեծ թշվառության մեջ են, այլև ամբողջովին ոչնչանում են նրանց դարանակալ սպասող քուրդ հրոսակախմբերի կողմից... Այս պայմաններում ես փորձել եմ բարեկամաբար Թալեաթ փաշայի վրա ներգործել և ապացուցել, որ Թուրքիան նմանօրինակ գործելակերպով ինքն իրեն է վնասում և արդարացնում իր թշնամիների կողմից կատարվող մեղադրանքները: ...Բարոն Վանգենհայմն ինձ ասաց, որ ինքն այսօր մեծ վեզիրի հետ այդ թեմայով զրուցել է և, որ վերջինս իր առաջ քաշած փաստարկները որպես ճշմարտություն է ընդունել»:[120]

• Տրապիզոնից գերմանական հյուպատոսը Բերգֆելդը դեսպան Վանգենհայմին հեռագրում է. «Միայն Տրապիզոնի նահանգից տեղահանվել են 30000 հոգի: Այդպիսի զանգվածային փոխադրումը հարյուրավոր կիլոմետրեր ձգվող ճանապարհներով, անապաստան ու անսնունդ, հավելյալ նաև, որ 300 կիլոմետր վարակված է բծավոր տիֆով, մեծ զոհեր կխլի՝ հատկապես կանանցից ու երեխաներից: Այս դեպքում կտուժի ոչ միայն Թուրքիայի, այլև նրա դաշնակիցների բարոյական հեղինակությունը»:[121]

• Տրապիզոնում լույս տեսնող պաշտոնական "Meşveret" լրագիրն իր հունիսի 27-ի՝ կիրակի օրվա համարում տպագրում է տեղական իշխանությունների հունիսի 26-ի հայտարարությունը՝ Տրապիզոնի և շրջակայքի հայ բնակչությանը երկրի ներքին շրջաններ տեղափոխելու մասին, որտեղ մասնավորապես նշվում է. «Մեր հայ հայրենակիցները երկար տարիների օտարերկրյա սադրանքների հետևանքով որդեգրելով բազմաթիվ կեղծ գաղափարներ՝ հարուցել են այրունահեղություններ և փորձել են խաթարել Օսմանյան կայսրության ու հարևանների խաղաղությունն ու անվտանգությունը..., ուստի կառավարության որոշմամբ երկրում կարգն ու անվտանգությունը և հենց հայերի գոյատևումն ու համայնքների բարեկեցությունն ապահովելու համար մինչև պատերազմի ավարտը հայերը ստիպված են լինելու տեղափոխվել ներքին նահանգներ...»: Ապա նշվում է նաև, որ բացի հիվանդներից պետք է հեռանան բոլորը: Նրանք կարող են տանել շարժական գույք, ըստ իրենց ցանկության, իսկ անշարժ գույքն ու ունեցվածքը կգտնվի կառավարության հսկողության տակ և կպահվի փակ, պահպանվող շենքերում, ճամփորդության ընթացքում կապահովվի նրանց անվտանգությունն ու հարմարավետությունը, իսկ նահանգի բոլոր պաշտոնյաները «ճանապարհին պետք է հնարավոր օգնություն ցույց տան հայերին»:[122]

28 հունիսի

• Տարոնում կենտրոնացված թուրքական նահանջող մեծաքանակ ուժերն ու քրդական հրոսակախմբերը մեկ օրվա ընթացքում ոչնչացնում են Տարոնի շրջակա 125 հայաբնակ գյուղերի ողջ բնակչությանը:[123]

• Էրզրումի նահանգից տարագրված բազմանդամ քարավանները հրաման են ստանում Բաբերդի ճանապարհով շարժվել դեպի Էրզրումի գավառի Երզնկա քաղաք: Նրանց հետ թուրքերը շատ դաժանորեն են վարվում՝ երեխաներին սվինահարելով Եփրատ գետն էին գցում, իսկ մեծահասակներին տասնյակներով իրար էին կապում, գնդակահարում և գցում գետը:[124]

• Թալեաթը հեռագրով հրահանգում է կուսակալություններին. «Հայերի գյուղերը դատարկվելուց հետո այնտեղ ուղարկվող մահմեդական եկվորների երկրագործությունից անտեղյակ լինելու դեպքում վճարովի վարպետներ ճարեք և նրանց միջոցով ապահովեք տեղական երկրագործությունը, պահպանեք այգիների ու պարտեզների բարգավաճ վիճակը»: Իրոք՝ հաճախ այդ վարպետները հայերի էին, որոնց թուրքերը չտարագրեցին այնքան ժամանակ, մինչև թուրք եկվորները կարողացան յուրացնել այդ գործը, որից հետո բոլորին էլ կոտորեցին:[125]

• Տրապիզոնի ամերիկյան հյուպատոս Օ. Հայզերը, դեսպան Մորգենթաուին գրում է, որ հինգ օրվա ընթացքում, այսինքն՝ «...հինգշաբթի, հուլիսի 1-ին Տրապիզոնի և գավառի հայ բնակչությունը՝ ներառյալ կանայք և երեխաները, պետք է մեկնեն հարավ, Էլ Ջեզիրե կամ Մոսուլ՝ իշխանություններին հանձնելով իրենց պատկանող ամբողջ գույքը ...»:[126]

• Կոպենհագենում ամերիկյան դեսպան Մորիս Ֆրանսիս Էգանին ուղարկած նամակում Սեբաստիայի նահանգի Մարզվան քաղաքի ամերիկյան քոլեջի դասախոս Ջեսսի Մարդենը գրում է, որ հունիսի 28-ի գիշերը Մարզվանում ձերբակալվեցին և բանտարկվեցին բոլոր երիտասարդ հայերը:[127]

29 հունիսի

• Մարզվանի ամերիկյան քոլեջի դասախոս Ջեսսի Մարդենի՝ Դանիայում ԱՄՆ-ի դեսպան Էգանին ուղարկած նամակում նշվում է նաև, որ հունիսի 29-ին ձերբակալվել են քաղաքի հայ մտավորականները, որոնց այնուհետև՝ քաղաքից 12 մղոն հեռավորության վրա, նախօրոք փորված փոսերի մոտ մերկացնելուց հետո սպանել են շրջակա գյուղերի դանակներով զինված գյուղացիները: Բացի այդ, Ջեսսի Մարդենի նամակում նշվում է նաև, որ Մարզվանի 13000 հայերից 11500-ը տեղահանվել են, իսկ մնացածներին կրոնափոխ են արել:[128]

• Սկսվում են տարագրությունները Սեբաստիայի գավառի Բինգյոլ գյուղում:[129]

• Թուրքական «Վոլֆ» հեռագրական գործակալությունը հրապարակում է հայկական ջարդերին առնչվող թուրքական երրորդ զեկույցը, ըստ որի Վանի նահանգի 180000 մահմեդականներից փախուստով փրկվել են միայն 30000 հոգի, մինչդեռ 150000 տեղում մնացած մահմեդականները գտնվում էին ռուս սպաների և նրանց հրամանով գործող հայերի կողմից բնաջնջվելու անմիջական վտանգի տակ: Բայց իրականում, ըստ Լեփսիուսի, 180000 մահմեդականներից սպանվել են շատ քչերը:[130]

• Թալեաթը հրահանգում է հայերին այլևս չուղարկել Տեր-Զոր, քանի որ նրանց թիվն այնտեղ արդեն մեծ էր, այլ պետք է նրանց ուղարկել Հալեպի նահանգի արևելյան մաս և Քերքուքի գավառ:[131]

• Մի այլ հրամանով Թալեաթը հրահանգում է հայ որբերին բաժանել բարեկեցիկ թուրք ընտանիքներին, որտեղ չէին լինի ո՛չ հայ, ո՛չ էլ մեկ այլ օտարազգի: Իսկ մնացած որբերը պետք է հանձնվեին աղքատ թուրքերին՝ պայմանով, որ նրանք իրենց ստացած յուրաքանչյուր որբի համար վճարեն երեսուն դահեկան:[132]

• Մշո գավառի Հավատորիկ գյուղից Եղիազար Կարապետյանն իր հուշերում գրում է. «Գավառի Քրդագոմ և Հունան գյուղերի մարագներում թուրքերը մոտ հազար հայերի՝ կանանց, երեխաների, երիտասարդների և ծերերի են այրել»:[133]

• Հալեպի գերմանական հյուպատոս Ռյոսլերը՝ Վարդգեսին և Զոհրապին Հալեպում թողնելու համար, որոնք այստեղ էին բերվել Դիարբեքիր տանելու նպատակով, դիմում է նահանգապետին և դեսպան Վանգենհայմին՝ ասելով, որ «...այն, ինչ հայտնի էր այդ տեղի մասին, դա նրանց համար հավասար է մահվան: Զոհրապը սրտի հիվանդություն ունի, իսկ Վարդգեսի կինը նոր է ծննդաբերել»: Եվ թախանձագին խնդրում է միջնորդել՝ միաժամանակ շեշտելով, որ հեռագիրը գրում է «...մի բարձրաստիճան մահմեդականի միջնորդությամբ»:[134]

• Տրապիզոնում ավստրոհունգարական հյուպատոսը հունիսի 29-ին՝ դեսպան Պալավիչինիին ուղղված թիվ 101 հեռագրով խնդրում է սահմոկեցուցիչ տեսարանները և հազարավոր անմեղ կանանց, երեխաների ու ծերերի մահացու վախը նկատի ունենալով՝ համապատասխան միջոցներ ձեռնարկել հայերի տեղահանությունը հետաձգելու համար: Հյուպատոսը վկայակոչում է մի հայ կնոջ իրեն ասած խոսքերը. «Բավ են անթիվ զոհերը, գեթ մի զավակն իմ փրկեցեք...»:[135]

• Նույն օրվա մեկ այլ հեռագրով Տրապիզոնի հյուպատոս Կվյատկովսին դեսպան Պալավիչինիին հայտնում է. «Վստահելի աղբյուրներից իմացա, որ երիտթուրքական կոմիտեն մի քանի օր առաջ թույլատրել է վրացիներից հայկական կոտորածների մասնակիցներ հավաքագրել, բայց

այն չի կայացել վրացական կոմիտեի առարկության շնորհիվ...»:[136]

• Տրապիզոնից գերմանական հյուպատոս Բերգֆելդը դեսպան Վանգենհայմին հեռագրում է. «Հայ ընտանիքները հրաման են ստացել պատրաստ լինել վաղը երեկոյան մեկնելու: Ես իմ գործընկերների հետ այն կարծիքին եմ, որ հունիսի 27-ի հեռագրում նկարագրված պայմաններում կանանց և երեխաների փոխադրումը հավասարազոր է զանգվածային կոտորածի»: Եվ հետո ավելացնում է, որ մեծ թվով կանանց և երեխաներին բացառության կարգով փրկել հնարավոր է միայն Բ. Դոռան հրահանգի միջոցով:[137]

30 հունիսի

• Տրապիզոնի ամերիկյան հյուպատոս Օ. Հայզերը դեսպան Մորգենթաուին տեղեկացնում է, որ իրենց մոտ եկած թուրք ականատեսներից լսում են լուրեր Բայբուրթի և Էրզրումի շրջակայքից վերջերս տեղահանված հայերի սարսափելի տառապանքների մասին: Նա գրում է, որ մի թուրք սայլապան «արցունքն աչքերին» պատմել է Էրզրումից տաս ժամ հեռու, Աշկալայի մոտ գտնվող մի դաշտում իր տեսած 150 հայ կանանց և երեխաների մասին, որոնցից շատերը «համարյա մերկ էին և սոված, շատերի գրկին կային երեխաներ»: Այդ սայլապանը նրանց է տվել իր մոտ եղած ողջ գումարը և «...ի վիճակի չլինելով տեսնել նրանց տառապանքները, հեռացել է:

Մի ոստիկան, որը վերջերս է վերադարձել այդ շրջանից, նշում է, որ տեղահանվածները թափառում են անտառներում և լեռներում, նրանցից մի մասը՝ մերկ, պատվազրկված և թալանված: Այսպիսի հանգամանքներում Տրապիզոնի հայերը՝ իմանալով իրավիճակը, լիովին հավատացած են, որ տեղահանվելու դեպքում իրենց ևս սպասվում են նման տառապանքներ»:[138]

• Խարբերդի ամերիկյան հյուպատոս Լեսլի Դեյվիսը դեսպան Մորգենթաուին գրում է, որ ինքը դեսպանատանը տեղեկացնում է «...երբևէ, որևէ կառավարության նախաձեռնած ամենադաժան հղացման՝ մարդկության պատմության մեծագույն ողբերգություններից մեկի մասին... Անցած շաբաթ հավաստի լուրեր էին ստացվել, որ կոտորած է նախապատրաստվում: Կարծում եմ, գրեթե կասկած չի կարող լինել, որ դա վաղուց է ծրագրվել: Ծրագրված է նաև հայ ժողովրդի բնաջնջման մի ուրիշ միջոց: Խոսքը ողջ հայ ազգաբնակչության բռնի տեղահանելու մասին է, այն էլ ոչ միայն մեր, այլև Հայաստանը կազմող բոլոր վեց նահանգներից, որտեղ ապրում են մոտ 1000000 հայ... Մարդկության պատմության ընթացքում հավանաբար նման զանգվածային տեղահանության մտադրություն չի եղել...

Մի քանի օր առաջ վալիին հարցրի, թե ի՞նչ է նախաձեռնում այդ մարդկանց պաշտպանելու համար: Նա պատասխանեց, որ մեծ քանակությամբ զինվոր-ոստիկան նրանց կուղեկցի, որպեսզի չկրկնվի ավելի վաղ տեղահանվածների ճակատագիրը, որոնց ճանապարհին հանդիպել էին քրդերը և չափազանց դաժան վարվել նրանց հետ: Կասկած չկա, որ քրդերը նման հաշվեհարդարի հատուկ հրահանգ էին ստացել: Շատերը ոչ առանց հիմքի կարծում են, որ այս մեկնողներին էլ նույն ճակատագիրն է սպասվում...»:[139]

• Կոստանդնուպոլսում Գերմանիայի գլխավոր հյուպատոս Մորդմանը՝ Թուրքիայում գերմանական բարեգործական հաստատությունների վերաբերյալ մի նախագծի առիթով կատարած իր գրառման մեջ նշում է, որ վերջին օրերին Սասունից, Տրապիզոնից և Խարբերդից ստացված հեռա-

գրերը ցույց են տալիս, և ինչն էլ մի քանի օր առաջ իրեն ասել է Ջամբուլատ բեյը, որ թուրքական կառավարությունը որոշել է էլ ավելի հեռուն տարածել հայերի տեղահանությունները և Ջանիկի, Տրապիզոնի, Սեբաստիայի, Մամուրեթ ուլ Ազիզի (Խարբերդ) հայերին աքսորել Միջագետք: «Դա այլևս հնարավոր չէ արդարացնել զինվորական նկատառումներով: Ինչպես ինձ մի քանի շաբաթ առաջ ասաց Թալեաթ բեյը, խոսքն ավելի շատ հայերի ոչնչացման մասին է»,- գրում է Մորդմանը:[143]

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն հայկական տասնհինգի, Պէյրութ, 1975 (Այսուհետև՝ Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն...), էջ 40: Սեպուհ Ակունի. Միլիոն մը Հայերու ջարդի Պատմութիւնը, Կ. Պոլիս, 1921 (Այսուհետև՝ Սեպուհ Ակունի. Միլիոն մը Հայերու...), էջ 78-80: *Ըստ Ակունիի՝ ինքնապաշտպանությունն ավարտվեց հունիսի 14-ին.* տե՛ս Սեպուհ Ակունի. Միլիոն մը Հայերու..., էջ 215, *ըստ Արզումանյանի և Կիրակոսյանի՝ հունիսի 29-ին,* Արզումանյան Մ. Հայաստանը 1914-1917, Երևան, 1969 (Այսուհետև՝ Արզումանյան Մ. Հայաստանը...), էջ 414 և Ջոն Կիրակոսյան. Առաջին համաշխարհային պատերազմը և Արևմտահայությունը, 1914-1916, Երևան, 1967 (Այսուհետև՝ Կիրակոսյան Ջ. Առաջին համաշխարհային պատերազմը...), էջ 350: *Ըստ Մնացականյանի ինքնապաշտպանությունը սկսվեց հուլիսի 3-ին.* տե՛ս Ահարոնեան Գ. Յուշամատեան Մեծ Եղեռնի, Պէյրութ, 1965 (Այսուհետև՝ Ահարոնեան Գ. Յուշամատեան...), էջ 51, *ըստ Միրունիի՝ հունիսի 5-ին և ավարտվեց հունիսի 28-ին.* տե՛ս «Էջմիածին», 1965, թիվ Բ-Գ-Դ,էջ 24: *Իսկ ըստ Մարգսյանի այն սկսվեց հունիսի 12-ին.* տե՛ս Սարգսյան Ե. Թուրքիան եւ նրա նուաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918, Երևան, 1964, էջ 288 և *ըստ Արզումանյանի՝ հունիսի 2-ին.* տե՛ս Արզումանյան Մ. Հայաստանը..., էջ 411: *Արամ Հայկազի համաձայն ինքնապաշտպանությունը սկսվեց հունիսի 2-ին և ավարտվեց 26/28 հունիսին, մինչ առաջին գնդակն արձակվեց հունիսի 3-ին.* տե՛ս Արամ Հայկազ. Շապին Գարահիսար եւ իր հերոսամարտը, Նիւ Եորք, 1957, էջ 121 և 151, իսկ *Տէօվլէթեանը և Արծրունին տալիս են հունիսի 2-ը ձերբակալությունների համար.* տե՛ս Սարգիս Խ. Տէօվլէթեան. Յուշեր Շապին Գարահիսարեն, Փարիզ, 1954, էջ 136, Վահե Արծրունի. Շապին-Գարահիսարի ինքնապաշտպանությունը, 1915, Թեհրան, 1956, էջ 26, *ըստ Միրունիի՝ հունիսի 24-ին տեղի ունեցան ջարդեր Շապին-Գարահիսարում.* տե՛ս «Էջմիածին», 1965, թիվ Բ-Գ-Դ, էջ 16: *Իսկ թուրքական Վոլֆ հեռագրական գործակալությունն իր հինգերորդ զեկույցով՝ աղավաղելով փաստերը հուլիսի 16-ին նշում է, թե, իբր, «Մայիսի 29-ին (նոր տոմարով հունիսի 12-ին) 500 զինված հայեր և նրանց միացած դասալիքներ հարձակվում են Շապին-Գարահիսարի թուրքական քաղերի վրա...».* տե՛ս Լեփսիուս Յոհաննես. Գաղտնի տեղեկագիր, հայ ժողովրդի ջարդերը, Երևան, 2003 (Այսուհետև՝ Լեփսիուս Յ. Գաղտնի տեղեկագիր...), էջ 144, *նույնն է կրկնում նաև Սոֆիայի թուրքական դեսպանն իր հրատարակած զեկույցով.* տե՛ս «Հայաստան», Սոֆիա, 4 հուլիս, 1915, էջ 1: *Հետագայում Թալեաթը ևս կեղծելով իրականությունը, գրում է. «2/15 հունիսի 1915թ. հայկական քաղերում (Շապին-Կարահիսարի) զենքի համար խուզարկություն կատարող ոստիկանները սպանվեցին և միաժամանակ կտրելով հեռախոսային գիծը՝ խզեցին կապը Կարահիսարի հետ: Մեկ օր ու գիշեր քաղաքի մահմեդական բնակչությանը զնդակահարելուց հետո հայերը իրենց դեկավարների հետ բարձրացան Կարահիսարի բերդ, ուր լայն պաշտպանական պատրաստություններ էին տեսել՝ կուտակելով մեծ քանակությամբ ռազմա-*

մթերք: Այստեղից կրակ բացվեց ամբողջ քաղաքի վրա... հայերը քսանհինգ օր մնացին ինքնապաշտպանության մեջ... Այս ըմբոստության ընթացքում զոհվեցին ութսունչորս զինվորներ, որոնցից երկուսը սպա, իսկ քաղաքի բնակչությունից սպանվեց երեսուն մարդ և վիրավորվեցին քսան հոգի». Talât Pasanin Hatiralari, Istanbul, 1958, ss. 68-69.

[2] Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 40: Հովհ. Արք. Նազլեան. Յուշեր (Մերձավոր Արեւելքի 1914-1928 շրջանի քաղաքական-կրօնական դեպքերուն մասին), Հ. Ա. Պէյրութ, 1960 (Այսուհետև՝ Նազլեան Յ. Յուշեր...), էջ 343:

[3] Ամերիկայի միացյալ նահանգների վավերագրերը 1915-1916թթ. Հայոց ցեղասպանության մասին, Երևան, 2002 (Այսուհետև՝ Ամերիկայի միացյալ նահանգների վավերագրերը...), էջ 34: James Bryce, Arnold Toynbee. The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916: Documents Presented to Viscount Grey of Falladon, by Viscount Bryce (Uncensored Edition), Reading, UK. Taderon Press, 2000, p. 44.

[4] Տաշեան Յ. Հայ Ազգի Տարագրութիւնը գերմանական վաւերագիրներու համեմատ, Վիեննա, 1921 (Այսուհետև՝ Տաշեան Յ. Հայ Ազգի Տարագրութիւնը...), էջ 171-172:

[5] Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 40: Barby Henry. Au Paus de L'epouvante: L' Armenie martyre, Beyrouth, 1973 (Այսուհետև՝ Barby Henry. Au Paus de L'epouvante...), p. 57:

[6] Նազլեան Յ. Յուշեր..., էջ 255:

[7] Deutschland und Armenien, 1914-1918, Sammlung Diplomatischer Aktenstücke, Herausgegeben und Eingeleitet von Dr. Johannes Lepsius, Mit Einem Vorwort Zur Neuausgabe von Tessa Hofmann und einem Nachwort von M. Rainer Lepsius, Bremen, 1986 (Այսուհետև՝ Deutschland und Armenien), N 73, S. 80.

[8] "Армянский вопрос и геноцид армян в Турции" (1913-1919). Материалы политархива МИД Кайзеровской Германии. Сборник. Составитель, ответственный редактор, автор предисловия, введения и примечаний Вардгес Микаелян, Ереван, 1995 (Այսուհետև՝ Армянский вопрос и геноцид армян...), стр. 189-190, R14086, Ab. 20525.

[9] «Հայաստան», թիվ 29, 20 հունիսի, 1915:

[10] *Նազլեանը տալիս է 20-ը հունիսի թվականը՝ Հաճնի հետ Սիսն ու Կարա-Բազարն էլ նշելով.* տե՛ս Նազլեան Յ. Յուշեր..., էջ 430: *Իսկ Միսակ Քելեշյանը Սիսի տեղահանությունը դնում է մայիսի վերջին կամ հունիսի սկզբին.* տե՛ս Միսակ Քէլէշեան. Սիս-Մատեան, Պէյրութ, 1949, էջ 556-557: James Bryce. The Threatment of Armenians in the Ottoman Empire, 1915-16, Beirut, 1972 (Այսուհետև՝ James Bryce. The Threatment of Armenians...), p. 494: Տաշեան Յ. Հայ Ազգի Տարագրութիւնը..., էջ 201: Լորտ Պրայս. Հայկական ջարդերու փաստաթուղթերը, Ա մաս, Կ. Պոլիս, 1920 (Այսուհետև՝ Լորտ Պրայս. Հայկական ջարդերու...), էջ 64-65:

[11] Տաշեան Յ. Հայ Ազգի Տարագրութիւնը..., էջ 77-78:

[12] Deutschland und Armenien, N 75, S. 81. Տաշեան Յ. Հայ Ազգի Տարագրութիւնը.., էջ 53:

[13] Նազլեան Յ. Յուշեր..., էջ 365:

[14] Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 40: Ստեփան Շահպազ. Գրիգոր Զօհրապ, Պէյրութ, 1959, էջ 41: Վաղինակ (Սմբատ) Բիւրատ, Գրիգոր Զօհրապ, «Սփիւռք», 18 մարտ, 1973, էջ 6: «Հայաստան» (Սոֆիա), 27 մայիս, 1915, էջ 1:

[15] Հայոց ցեղասպանությունը Թուրքիայում բուլղարական դիվանագիտական փաստաթղթերի լույսի ներքո, Երևան, 1996 (Այսուհետև՝ Հայոց ցեղասպանությունը բուլղարական...), էջ 19, ֆ N 321, օп. 1, а.е. 2462, л. 76.

[16] *Զաւեն պատրիարքը համարում է հունիսի 3-ին.* տե՛ս Զաւէն Արքեպս. Պատրիարքական Յուշերս. վավերագիրներ և վկայութիւններ, Գահիրէ, 1947 (Այսուհետև՝ Զաւէն Արքեպս. Պատրիարքական Յուշերս...). էջ 105-106: Կիրակոսյան Ջ. Առաջին համաշխարհային պատերազմը..., էջ 320-321: Լեփսիուս Յ. Գաղտնի տեղեկագիր..., էջ 135: Trumpener Ulrich. Germany and the Ottoman Empire 1914-1918, Princeton, New Jersey, 1968 (Այսուհետև՝ Trumpener. Germany and the Ottoman Empire...), p. 210. Pinon René. La suppression des Arméniens. Methode allemande-travail turc, Paris, 1916, p. 66: *Իսկ Բայուրը նշում է. «Երբ Բարձրագույն Դուռն այս կեղծ հաղորդագրությունները էր կատարում՝ տարագրությունները արդեն սկսվել էին գյուղերից և ավաններից».* տե՛ս Yusuf Hikmet Bayur. Turk Inkilabi Tarihi, cilt III, 1914-1918, Genel Savasi, kisim 3, Ankara, 1957, s. 42, *մինչդեռ տարագրությունները տեղի էին ունեցել և դեռ շարունակվում էին. ինչպես օրինակ Ակնի մոտակա Մաղմիկա գյուղը տարագրվեց հունիսի 15-ին, 1915թ.* տե՛ս Հայկազեան Գոլէճ. Հայագիտական Հետազօտական Կեդրոն. Ձայներիզ. թիվ 22:

[17] Армянский вопрос и геноцид армян..., R14086, Ab. 22101, приложение N 349.

[18] Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 40: Թաքուլեան Գր. Անթեղուած Գաղտնիքներ, Պէյրութ, 1967, էջ 88:

[19] Միլիտինեցի Գ. Նախճիրներ, Պոստոն, 1929 (Այսուհետև՝ Միլիտինեցի Գ. Նախճիրներ...), էջ 144-147, 155:

[20] Unites States Official Documents on the Armenian Genocide, Compiled and introduced by Ara Sarafian, Watertown, Massachusetts, 1994 (Այսուհետև՝ Sarafian A. US Official Documents...), vol. I, The Pheriperies: US State Department Record Group 59. 867. 4016/77. Ibid, doc. 9, pp. 18-20.

[21] Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 40: Նազլեան Յ. Յուշեր..., էջ 330: Բախտիկեան Ս. Ս. Արաբկիր եւ Շրջակայքի Գիւղերը, Պէյրութ, 1934, էջ 30:

[22] Deutschland und Armenien, N 76, s. 81. Տաշեան Յ. Հայ Ազգի Տարագրութիւնը..., էջ 19:

[23] The Armenian Genocide, News Accounts From the American Press (1915-1922), editor Richard D. Kloian. Berkeley, California, USA, 1985. ՀՀ ԳԱԱ, Ինֆորմացիոն բյուլետեն Հայերի ցեղասպանության պատմությունից, Երևան, 1991 (Այսուհետև՝ Հայերի ցեղասպանության պատմությունից...), էջ 58:

[24] Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 41: Ահարոնեան Գ. Յուշամատեան..., էջ 43: Լեփսիուս Յ. Գաղտնի տեղեկագիր..., էջ 32: Էոնեստ Զոմմեր. Ճշմարտությունն աշխարհամարտի ժամանակ Թուրքիայում հայ ժողովրդի կրած տառապանքների մասին, Երևան, 2002, էջ 31-33 (Sommer Die Wahrheit über die Leiden des armenischen Volks in Turkei wahrend des Weltkriegs, Verlag Orient, Frankfurt am Mein) (Այսուհետև՝ Էոնեստ Զոմմեր. Ճշմարտությունը աշխարհամարտի ժամանակ...): Barby Henry. Au Paus de L'epouvante..., p. 35. James Bryce. The Threatment of Armenians..., p. 647. *Նազլեանը և Դանիայի Կարմիր Խաչի անդամները տալիս են հունիսի 11-ը, իսկ Ակունին՝ հունիսի 10-ը,* տե՛ս Նազլեան Յ. Յուշեր..., էջ 190: Սեպուհ Ակունի. Միլիոն մը Հայերու..., էջ 147: *Արզումանյանը տալիս է 9-10 հունիսի թվականը.* տե՛ս Արզումանյան Մ. Հայաստանը..., էջ 374: *Մինչ Աստղիկ Մյուրմենյանը տալիս է հունիսի 9-ը.* տե՛ս Միւրմէնեան Աստղիկ. Երգնկա, Գահիրէ, 1947, էջ 352, իսկ *Մնացականյանի և Սիրունիի համաձայն տարագրություններին հաջորդեցին ջարդերը՝ հունիսի 8-ին.* տե՛ս Ահարոնեան Գ. Յուշամատեան..., էջ 45 և «Էջմիածին», 1965, թիվ Բ-Գ-Դ, էջ 16: *Ակունին նշում է նաև, որ հունիսի 7-ին Ակնից 90 հոգուց կազմված առաջին խմբի տարագրությունից հետո մնացած ակնեցիներին տեղահանեցին Ուրֆայի*

ճանապարհներով դեպի Մալաթիա: Այդ խմբից գեղեցիկ կանանց ու աղջիկներին առանձնացրեցին, իսկ մյուսներին կացնահարեցին: Իսկ Մկրտիչ Պարսամյանը Ակնի շրջակա գյուղերի տեղահանությունը դնում է «հունիսի սկզբներին»: Ծոցիկյանն էլ նշում է, որ ակնեցիները «տեղ-տեղ դիմադրեցին թեպետ, բայց յաջող արդիւնք չունեցան: Ու անոնք քշուեցան իրենց բնիկ քաղաքեն...». տե՛ս Ծոցիկեան Ս. Մ. Արեւմտահայ Աշխարհ, Նիւ Եորք, 1947, էջ 55:

[25] Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 41: Զաւէն Արքեպս. Պատրիարքական Յուշերս..., էջ 132-134: Սեպուհ Ակունի. Միլիոն մը Հայերու..., էջ 113-115:

[26] Morgentau Papers, Reel 7 / 587. Sarafian A. US Official Documents..., vol. II, The Pheriperies, doc. 45, p. 80.

[27] Լեփսիուս Յ. Գաղտնի տեղեկագիր..., էջ 32-33:

[28] Նազլեան Յ. Յուշեր..., էջ 349: Արամ Սահակեան. Դյուցազնական Ուրֆան եւ իր հայութիւնը, Պէյրութ, 1955 (Այսուհետեւ՝ Արամ Սահակեան. Դյուցազնական Ուրֆան...), էջ 774:

[29] Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 41: Լ. Վարդան. Հայկական տասնհինգը եւ հայերու լքեալ գոյքերը, Պէյրութ, 1970 (Այսուհետեւ՝ Լ. Վարդան. Հայկական տասնհինգը...), էջ 134: Արիս Տ. Կ. Գալֆայան. Չօմախլու, Նիւ Եորք, 1930 (Այսուհետեւ՝ Գալֆայան Ա. Չօմախլու...), էջ 111:

[30] Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 41: Կիլիկյան կսկիծներ. վավերագրեր Կիլիկիոյ կաթողիկոսական դիւանին, 1903-1915, Պեյրութ, 1927 (կազմ. Պզտիկեան Զաքարիա) (Այսուհետեւ՝ Կիլիկյան կսկիծներ...), էջ 182:

[31] Morgentau Papers, Reel 7/405. Ibid, vol. I, p. 21.

[32] Նազլեան Յ. Յուշեր..., էջ 172:

[33] Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 41: Լ. Վարդան. Հայկական տասնհինգը..., էջ 134: Գալֆայան Ա. Չօմախլու..., էջ 112:

[34] Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 41: Զաւէն Արքեպս. Պատրիարքական Յուշերս..., էջ 103:

[35] Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 41: Ահարոնեան Գ. Յուշամատեան..., էջ 454-455: Կիրակոսյան Ջ. Առաջին համաշխարհային պատերազմը..., էջ 337: Արզումանյան Մ. Հայաստանը..., էջ 374-375: Ահարոնեան Գ. Յուշամատեան..., էջ 43: James Bryce. The Threatment of Armenians..., p. 247. Barby Henry. Au Paus de L'epouvante..., p. 74. *Իսկ Քեմախից մի փոքր հեռու, Քղիի գավառի գյուղերում արդեն ջարդվել էին 53600 միայն կարնեցիներ.* տե՛ս Կիրակոսյան Ջ. Առաջին համաշխարհային պատերազմը..., էջ 342, *մինչ ըստ Կաբինի գերմանացի հյուպատոս Շյոբներ-Ռիխտերի՝ թուրքական 86-րդ հեծելազորային գումարտակը Քեմախի կիրճում գնդակահարել էր 20000-25000 հայ, հիմնականում կանանց ու երեխաների.* տե՛ս Deutschland und Armenien, S. XXIV.

[36] Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 41: Նազլեան Յ. Յուշեր..., էջ 366, 369: Թովմաս Գ. Արապեան (Սեւերեկցի). Յուշամատեան Սեւերեկի, Պէյրութ, 1971, էջ 244:

[37] Նազլեան Յ. Յուշեր..., էջ 369-372:

[38] Deutschland und Armenien, S. 82, N 78. Սաղըրեան. Կիսադարեան հուշամատեան (1898-1945), Փարիզ, 1948, էջ 113:

[39] Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 41-42: Անտոնեան Ա. Մեծ Ոճիրը, Պէյրութ, 1965, էջ 212:

[40] Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 42: Լ. Վարդան. Հայկական տասնհինգը..., էջ 134-136: Գալֆայան Ա. Չօմախլու..., էջ 112-113:

[41] Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 42: Հարութիւն Վ. Հուլանեան, Յուշամատեան Խոտորջուրի, Վիեննա, 1964, էջ 321-322: Արզումանյան Մ. Հայաստա-

նը..., էջ 377-378: Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում. փաստաթղթերի և նյութերի ժողովածու (խմբ. Մկրտիչ Ներսիսյան), Երևան, 1991 (Այսուհետև՝ Հայերի ցեղասպանության պատմությունից...), էջ 453-455:

[42] Նազլեան Յ. Յուշեր..., էջ 190, 647: Էռնեստ Զոմմեր. Ճշմարտությունը աշխարհամարտի ժամանակ..., էջ 50:

[43] Նազլեան Յ. Յուշեր..., էջ 400: Տաշեան Յ. Հայ Ազգի Տարագրութիւնը..., 206-207:

[44] Նազլեան Յ. Յուշեր..., էջ 372:

[45] Նույն տեղում, էջ 417:

[46] Հայկազ Ղազարեան. Ցեղասպան թուրքը, Պեյրութ, 1968 (Այսուհետև՝ Ղազարյան Հ. Ցեղասպան թուրքը...), էջ 74:

[47] Էռնեստ Զոմմեր. Ճշմարտությունը աշխարհամարտի ժամանակ..., էջ 33:

[48] Ամերիկայի միացյալ նահանգների վավերագրերը..., էջ 34:

[49] Նազլեան Յ. Յուշեր..., էջ 419:

[50] Deutschland und Armenien, N 79, S. 82. Տաշեան Յ. Հայ Ազգի Տարագրութիւնը..., էջ 53-54:

[51] Էռնեստ Զոմմեր. Ճշմարտությունը աշխարհամարտի ժամանակ..., էջ 50-51:

[52] 1915-16-29-ДЕ-005, РА-АА/пос. Кон./96, Волфганг и Зигрид Густы. Геноцид армян: Официальные документы из германских архивов, публикуемые впервые, Ереван, 2005 (Այսուհետև՝ Волфганг и Зигрид Густы. Геноцид армян...), сс. 121-124

[53] Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 42: Ցմշկածագ եւ իր գաղթը (Ս. Ս. Բախտիկեան, խմբ.), Ոսկեգետակ, հտ. Գ, Պէյրութ, 1948, էջ 396, 400: Պօղարեան Գր. Ցեղասպան Թուրքը – վկայություններ, Պէյրութ, 1973 (Այսուհետև՝ Պօղարեան Գր. Ցեղասպան Թուրքը...), էջ 55-56:

[54] Նազլեան Յ. Յուշեր..., էջ 419, 655:

[55] Պալաքյան Գր. Հայ Գողգոթան, Պէյրութ, 1977, էջ 173:

[56] Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 42: Կիլիկեան կսկիծներ..., էջ 191-192:

[57] Армянский вопрос и геноцид армян..., сс. 207-208, R 14088, Zu Ab 28584.

[58] Deutschland und Armenien, S. 83, N 80.

[59] Նազլեան Յ. Յուշեր..., էջ 430:

[60] Լեփսիուս Յ. Գաղտնի տեղեկագիր..., էջ 41, 42:

[61] Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 42: Ահարոնեան Գ. Յուշամատեան..., էջ 454: Արզումանյան Մ. Հայաստանը..., էջ 378: *Հունիսի 9-ի հայտարարության համաձայն տարագրությունները պետք է սկսվեին հունիսի 19-ին, բայց սկսվեցին ավելի շուտ.* տե՛ս Ահարոնեան Գ. Յուշամատեան..., էջ 456, *ըստ Սթեփլթոնի և Պրայսի՝ հունիսի 16-ին.* տե՛ս James Bryce. The Threatment of Armenians..., p. 223, 647. Լորտ Պրայս. Հայկական ջարդերու..., էջ 65: *Ըստ Մաֆրաստեանի՝ հունիսի 18-ին.* տե՛ս նույնի էջ 238, *ըստ Ակունիի, որն իր տեղեկությունները վերցրել է վերապրողներից՝ հունիսի 15-ին.* տե՛ս Մեպուն Ակունի. Միլիոն մը Հայերու..., էջ 141, *ըստ Նազլեանի՝ տեղահանություններն սկսվեցին հունիսի 9-14-ին և տևեցին մինչև հուլիսի 26-ը.* տե՛ս Նազլեան Յ. Յուշեր..., էջ 172, *մի քանի էջ այն կողմ Նազլեանը տալիս է հունիսի 16-ը,* տե՛ս էջ 176, *մի փոքր հետո էլ՝ հունիսի 14-26-ը* (էջ 572), *մինչդեռ Պայլարեսը նշում է, որ Կարինի հայերը տարագրվեցին մայիսի 1-ից՝ դեպի Սամսոն.* տե՛ս Paillarés Michel. Le Kemalisme devant les Allies, Paris, 1922, p. 284. Տաշեան Յ. Հայ Ազգի Տարագրութիւնը..., էջ 58. Deutschland und Armenien, s. XXV. Ահարոնեան Գ. Յուշամատեան..., էջ 43: Չարըզ Ղազար. Կարինապատում, Բեյրութ, 1957, էջ 471-472, *տալիս է հունիսի 14-15-ը, Հանրի Բարբին՝ հունիսի 16-ը.* տե՛ս Barby Henry. Au Paus de L'epouvante..., pp. 24, 31. *Սթեփլթոնի համաձայն զանգվածային գաղթը սկսվեց հունիսի*

19-ին և 9 օր հետո՝ հունիսի 28-ին աքսորվեցին գրիգորյան եկեղեցու առաջնորդ Սմբատ Մաղեթյանը և ավետարանական հովիվը. տե՛ս նույնի էջ 31: *Սթեփլթոնը նշում է նաև, որ սեպտեմբերի 28-ին էլ վաճառքի հանվեցին հայերի թողած գույքերը (շարժական և անշարժ).* տե՛ս նույնի էջ 27-ը:

[62] Русские источники о геноциде армян в Османской Империи. 1915-1916 годы (Сборник документов и материалов). Выпуск I, Ереван, 1995 (Այսուհետը՝ Русские источники...), сс. 42, 43, Раздел Азиатской Турции (Այսուհետև՝ РАТ), сс. 136-137.

[63] Армянский вопрос и геноцид армян..., сс. 180-182, R 14088, Ab 28584.

[64] US State Department Record Group 59.867. 4016/92. Ibid, volume I, pp. 30-32.

[65] Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն...,, էջ 42, 43: Արսէն Կիտուր խմբ., Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան, հտ. Ա, Պէյրութ, 1962, էջ 376-391: Թանչուտեան Յարութիւն. Քէօսթէնճէի ժողով եւ Քսան Կախաղաններ, գիրք Ա, Սելմա, 1973, էջ 28-109: Տե՛ս նաև Կիրակոսյան Ջ. Առաջին համաշխարհային պատերազմը..., էջ 297-298: Ահարոնեան Գ. Յուշամատեան..., էջ 41: *Իսկ Կեսարիայում կախված հայերի համար տրված պատճառաբանության մեջ ասվում է, որ նրանք կախվել են «Պուքրեշի մէջ հնչակեան և դաշնակցական գաղտնի ժողովին հրահանգերուն հնազանդած ըլլալուն համար».* տե՛ս Զաւէն Արքեպս. Պատրիարքական Յուշերս..., էջ 135:

[66] Նազլեան Յ. Յուշեր..., էջ 419:

[67] Հայերի ցեղասպանության պատմությունից..., էջ 5:

[68] Русские источники..., с. 43, РАТ с.137.

[69] Deutschland und Armenien, N 129, S. 117.

[70] Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 43: Լեփսիուս Յ. Գաղտնի տեղեկագիր..., էջ 141:

[71] Геноцид армян, ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и коментарий. Сост. Ю. Барсегов, том I, Москва, 2002 (Այսուհետև՝ ГАОТОМС), т. I, стр. 239. Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 43: Deutschland und Armenien, s. 84. Trumpener. Germany and the Ottoman Empire..., p. 212. *Այս հեռագրի համար Ֆրանչեսկո Միտարին տալիս է 1 հունիսի.* տե՛ս France sco Sidari. La Questione Armenia nella Politica della Grandi Potenze della chiusura del Congresso di Berlino del 1878 al Trattato di Losanna del 1923, Padova, 1962, p. 81. Ահարոնեան Գ. Յուշամատեան..., էջ 384: Vierbücher, Heinrich. Was die keiserliche Regierung deutscken Untertan en verschwigen hat. Armenien 1915. Die Abschlachtung eines Kulturvolkes durch die Türken. Hamburg-Bergedorf. Fackelreiter-Verlag. Տե՛ս նաև Германские источники о геноциде армян в период Первой мировой войны (сборник документов и материалов в 2-х томах), под редакцией профессора С. Степаняна, том I, Ереван, "Айастан", 1991 (Այսուհետև՝ Германские источники о геноциде армян...), с. 152.

[72] Թերզեան Ե. Պատմագիրք Տիվրիկի Հայոց, Պէյրութ, 1972, էջ 125: Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 43:

[73] Նազլեան Յ. Յուշեր..., էջ 300-301: Վահե Հայկ. Խարբերդ և անոր ոսկեղեն դաշտը, Նյու Յորք, 1959, էջ 1440-1441:

[74] Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 43: Ահարոնեան Գ. Յուշամատեան..., էջ 394: Deutschland und Armenien, N 86, S. 86.

[75] Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 43-44: Papers Relating to the Foreigen Relations of the United States: 1915: Supplement: the World War, Washington: 1928, pp. 979, 982.

[76] Армянский вопрос и геноцид армян..., сс. 182-183, R 14086, Ab 19205.

[77] Նույն տեղում. էջ 183, R 14086, Ab 19747. Deutschland und Armenien, N 83, s. 85.
[78] Տաշեան Յ. Հայ Ազգի Տարագրութիւնը..., էջ 55:
[79] Էռնեստ Ջոմմեր. Ճշմարտությունը աշխարհամարտի ժամանակ..., էջ 35:
[80] Ավստրո-Հունգարիայի դիվանագետների հաղորդագրությունները Հայոց ցեղասպանության մասին (1915-1918), կազմ. Արտեմ Օհանջանյան, թարգմ. Վ. Մարտիրոսյան, Երևան, 2004 (Այսուհետև՝ Östereich-Armenien), Bd. VI, ss. 4591-4592:
[81] Германские источники о геноциде армян..., с. 250.
[82] Օհանջանյան Ա. 1915 թվական. Անհերքելի վկայություններ (Ավստրիական վավերագրերը Հայոց ցեղասպանության մասին), Երևան, 1997, էջ 191:
[83] Армянский вопрос и геноцид армян ..., с. 208, R 14088, Zu Ab 28584.
[84] Morgentau Papers, Reel 7/41, 593. Ibid, v. I d.14, p. 28.
[85] Հայերի ցեղասպանության պատմությունից..., էջ 418-419:
[86] Deutschland und Armenien, N 129, S. 116-117. Армянский вопрос и геноцид армян..., с. 184-186, R 14088, Ab 22125.
[87] US State Department Record Group 59867. 4016/97. Ibid, v. I, doc. 19, p. 35-36.
[88] Միլիտինեցի Գեորգ. Նախճիրներ..., էջ 157-158:
[89] Deutschland und Armenien, N 88, S. 87. Տաշեան Յ. Հայ Ազգի Տարագրութիւնը..., էջ 54:
[90] Deutschland und Armenien, N 89, S. 87.
[91] Լեփսիուս Յ. Գաղտնի տեղեկագիր..., էջ 36-37:
[92] Նազլեան Յ. Յուշեր..., էջ 163:
[93] Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 44: Տէյիրմենճեան Նաւասարդ. Գրնճլլար Գիւղի Պատմութիւնը, Պէյրութ, 1960, էջ 165:
[94] Армянский вопрос и геноцид армян..., стр. 187-189, R 14086, Ab 19605.
[95] US State Department Record Group 59.867. 4016/127. Sarafian A. US Official Documents..., vol. III, The Central Lands, doc. 5, pp.12-17.
[96] Նազլեան Յ. Յուշեր..., էջ 197, 217:
[97] Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 44: Ղազարյան Հ. Ցեղասպան թուրքը..., էջ 130:
[98] Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 44: Տաշեան Յ. Հայ Ազգի Տարագրութիւնը..., էջ 58, 61-62: Ահարոնեան Գ. Յուշամատեան..., էջ 44: Նազլեան Յ. Յուշեր..., էջ 572: *Ըստ «Ազգ» թերթի 1920թ. (1361) համարի՝ «քաղաքն այժմ բոլորովին ավերակ դարձած է, բացի քանի մը տները, ուր թուրքերը բնակած են, իսկ եկեղեցին կիսակործան է: Թամարզայի վանքը բոլորովին քանդված է, իսկ եկեղեցու պատերը գոյութիւն ունին. կան բազմաթիվ որբեր: Անդրէասի մեջ 35-45 տուն միայն կանգուն է. եկեղեցին ու դպրոցը՝ քանդված: Բուրգ գիւղին մեջ, որ 400-450 տուն ուներ, 8-10 տուն միայն կմնան և երկու կիսակործան եկեղեցի: Սուրմու թուրք գիւղին մեջ կան՝ այս գիւղեն միայն 12 հոգի մնացած: Մշակնոց 300-350 տնուոր գիւղէն կան 15-18 տուն, եկեղեցին ու վանքը՝ քանդուած: Սիս գիւղն ամբողջովին քանդուած է, վանքով, վանատնով ու գեղակերտ եկեղեցով: Վերի և Վարի Մնպտերեն 15-20 տուն կանգուն է, 17-ի չափ վերապրողներ կան, մեծ մասամբ որբ, վանքը՝ կիսակործան...».* տե՛ս Տաշեան Յ. Հայ Ազգի Տարագրութիւնը..., էջ 61-62: «Հապուսի գիւղի պատմությունը», Պոստոն, 1963, էջ 147:
[99] Östereich-Armenien, S. 4594, HHStA PA XXXVIII 366, Z. 7/p.
[100] Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 49: Զաւէն Արքեպս. Պատրիարքական Յուշերս..., էջ 151: Սեպուհ Ակունի. Միլիոն մը Հայերու..., էջ 108-109:
[101] Հայերի ցեղասպանության պատմությունից..., էջ 6:
[102] Армянский вопрос и геноцид армян..., стр. 191-193: Stats archiv Dresden, Bl. 1952,

ss. 13-18.

[103] Östereich-Armenien, Bd VI, SS. 4599-4601, HHStA PA XII 209, N 49/P-F.

[104] Նույն տեղում, SS. 4595-4598, HHStA PA XII, 209, N 49/P-E:

[105] Русские источники..., с. 45.

[106] Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 44: James Bryce. The Threatment of Armenians..., p. 646. Կիրակոսյան Ջ. Առաջին համաշխարհային պատերազմը..., էջ 352: «Էջմիածին», 1965, թիվ Բ,Գ,Դ, էջ 16: Նազլեան Յ. Յուշեր..., էջ 572: *Ըստ Ակունու՝ Բաղեշի բոլոր գավառներում ջարդերը սկսվեցին հունիսի 25-ին*, տե՛ս Սեպուհ Ակունի. Միլիոն մը Հայերու..., էջ 164: *Լեփսիուսը հուլիսի 1-ն է համարում ջարդերի սկիզբը*. տե՛ս Deutschland und Armenien, s. XXV: Տաշեան Յ. Հայ Ազգի Տարագրութիւնը..., էջ 59: *Իսկ Բարբին ասում է, որ ջարդերը հուլիսից սկսվեցին*. տե՛ս Barby Henry. Au Paus de L'epouvante..., p. 94: *Ըստ մի քանի տվյալների Ջևդեթ բեյը «հունիսին» շարժվեց Բաղեշի վրա: Նախ կողոպտեց հայերին, ապա երկու տասնյակ հայերի կախեց և գնդակահարեց Բիթլիսում ձերբակալված հայերին՝ ի տես բոլորի: Իսկ մնացած հայերը դիմեցին զենքի, բայց չկարողացան երկար դիմադրել՝ զինամթերքի պակասի պատճառով: Վերջում նրանք իրենց ընտանիքներով քույն խմեցին: Իսկ մնացած կանայք ու երեխաները բաշխվեցին քուրդ և քուրդ ամբոխի միջև*. տե՛ս Նազլեան Յ. Յուշեր..., էջ 168-169: Այս մասին տե՛ս նաև Սարգիս և Միսակ Բդէեան. Հռաբազատ պատմութիւն Տարոնոյ, Գահիրէ, 1962, էջ 348:

[107] Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 44: Զաւէն Արքեպս. Պատրիարքական Յուշերս..., էջ 116-121: Ահարոնեան Գ. Յուշամատեան..., էջ 259-262:

[108] Արամ Սահակեան. Դյուցազնական Ուրֆան..., էջ 781:

[109] Deutschland und Armenien, N 95, S. 90.

[110] Русские источники..., с. 45. АВПР, Политархив, д. 3804, с. 34:

[111] Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 44: Ահարոնեան Գ. Յուշամատեան..., էջ 394: Deutschland und Armenien, S. 90, N 96.

[112] Նազլեան Յ. Յուշեր..., էջ 197: Östereich-Armenien, Bd VI, S. 4632-4634: Армянский вопрос и геноцид армян..., стр. 191. Stats archiv Dresden, Bl. 1952, SS. 13-18. Deutschland und Armenien, N 109, SS. 211-212.

[113] Լորտ Պրայս. Հայկական ջարդերու..., էջ 159-161: Լեփսիուս Յ. Գաղտնի տեղեկագիր..., էջ 41-42: James Bryce. The Threatment of Armenians..., pp. 332-333, 341, 647: *Ըստ Արզումանյանի տարագրություններն ու ջարդերը տեղի ունեցան «Հունիսի վերջին հուլիսի սկզբին», և ապա՝ Մարզվանին հաջորդեցին Ամասիան, Կեմերեկը և Զիլեն*. տե՛ս Արզումանյան Մ. Հայաստանը..., էջ 408-409: Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 44:

[114] Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 44: Նազլեան Յ. Յուշեր..., էջ 506-507:

[115] Östereich-Armenien, Bd VI, S. 4611, HHStA PA XL 209, 27 Juni.

[116] US State Department Record Group 59.867. 4016/269. Ibid, v. III, doc. 2, pp. 2-8: Նազլեան Յ. Յուշեր..., էջ 301:

[117] Армянский вопрос и геноцид армян..., стр. 208, R 14088, Zu Ab 28584.

[118] Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 44: Deutschland und Armenien, S. XXV, *ըստ Նազլեանի՝ տարագրության հայտարարությունը կատարվեց 24/25 հունիսին, իսկ տեղահանությունը տեղի ունեցավ հունիսի 26-ին*. տե՛ս Նազլեան Յ. Յուշեր..., էջ 217-218: *Նա տալիս է նաև հունիսի 27-ը*. տե՛ս նույն տեղում, էջ 572: *Միայն Արզումանյանն է տալիս «հուլիսի սկզբին»*, Արզումանյան Մ. Հայաստանը..., էջ 388: *Մամոնի տեղահանության մասին* տե՛ս Ահարոնեան Գ. Յուշամատեան..., էջ 474-475:

[119] Զաւէն Արքեպս. Պատրիարքական Յուշերս..., էջ 121-123: Սահակեան Գ. Յուշամատեան..., էջ 262-263:
[120] Östereich-Armenien, Bd VI, SS. 4608-4609, HHStA PA XII 209, N 50, P-C:
[121] Deutschland und Armenien, S. 91, N 100.
[122] US State Department Record Group 59.867. 4016/105. Ibid, v. II, doc. 2, pp. 15-16.
[123] Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 44-45: Արզումանյան Մ. Հայաստանը..., էջ 394:
[124] Լորտ Պրայս. Հայկական ջարդերու..., էջ 145: Նազլեան Յ. Յուշեր..., էջ 177:
[125] Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 45, 89: Լ. Վարդան. Հայկական տասնհինգը..., էջ 135: Գալֆայան Ա. Ջօմախլու..., էջ 112:
[126] US State Department Record Group 59.867. 4016/85. Ibid, v. II, doc. 2, pp. 1-2.
[127] NA/RG 59/867.4016/292, United States Official Records on the Armenian Genocide 1915-1917, compiled and with an introduction by Ara Sarafian, London, 2004, pp. 523-527.
[128] Նույն տեղում:
[129] Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 45: Պողարեան Գր. Ցեղասպան Թուրքը..., էջ 41:
[130] Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 45: Լեփսիուս Յ. Գաղտնի տեղեկագիր..., էջ 207-209: Deutschland und Armenien, s. LXXIV. Տե՛ս նաև Mandelstam André N. Le Sort de l'Empire Ottoman. Lausanne-Paris, Payot, 1917, pp. 355-356:
[131] Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 45, 89: Լ. Վարդան. Հայկական տասնհինգը..., էջ 135: Գալֆայան Ա. Ջօմախլու..., էջ 112:
[132] Լեւոն Վարդան. Ժամանակագրութիւն..., էջ 45, 89: Գալֆայան Ա. Ջօմախլու..., էջ 112 –113: Լ. Վարդան. Հայկական տասնհինգը..., էջ 135:
[133] Հայերի ցեղասպանությունը..., էջ 442: Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 219, թ. 24-36:
[134] Տաշեան Յ. Հայ Ազգի Տարագրութիւնը..., էջ 54: Deutschland und Armenien, N 103, s. 93.
[135] Östereich-Armenien, Bd VI, S. 4619, HHStA PA XII 209, Beilage 29 Juni 1915, N 101.
[136] Նույն տեղում:
[137] Deutschland und Armenien, S. 92, N 102.
[138] US State Department Record Group 59.867. 4016/93. Ibid, v. II, doc. 2, pp. 7-8.
[139] US State Department Record Group 59.867. 4016/269. Ibid, v. III, doc. 2, pp.2-8. Լեսլի Դևիս. Սպանդի նահանգը, Երևան 2001, էջ 263-273:
[140] 1915-06-30-ДЕ-002, PA-AA/пос. Кон./169, Волфганг и Зигрид Густы. Геноцид армян..., с. 125.

Կազմեց՝ Ժորա Նուրիջանյանը